

## Նոյեմբեր 4-ի Ընտրութիւններուն Առթիւ ՀԱՍ Զօրակցութիւն Կը Յայտնէ Շարք Սը Թեկնածուներու

Երեքշաբթի, Նոյեմբեր 4-ին Ամերիկայի ամբողջ տարածքին ընտրական օր է: Այս ընտրութիւնները ծանօթ են որպէս նախագահի կիսաշրջանի ընտրութիւններ եւ մեծ կարեւորութիւն կը ներկայացնեն երկրի օրէնսդիր իշխանութիւնը ձեռք ձգելու առումով:

Ընտրութիւններ պիտի կատարուին Ներկայացուցիչներու Տան բոլոր՝ 435 տեղերուն համար, ինչպէս նաեւ Մերակոյտի 100 աթոռներէն 33-ին համար:

Նոյն օրը, բազմաթիւ նահանգներու մէջ տեղի պիտի ունենան ընտրութիւններ կառավարիչի եւ տեղական այլ պաշտօններու համար:

Քալիֆորնիոյ հայաշատ նահանգէն ներս այս տարի Մերակոյտի ընտրութիւններ նախատեսուած չեն, նկատի ունենալով որ նահանգի երկու ծերակուտակներու՝ Տայան Ֆայնսթայնի եւ Պարպարա Պաքարի 6-ամեայ շրջանը չէ աւարտած տակաւին:

ՄԴԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) այս առթիւ իր գորակցութիւնը յայտնած է Քալիֆորնիան ներկայացնող շարք մը գոնկրէսականներուն, Նահանգային Խորհրդարանի անդամութեան թեկնածուներուն, ինչպէս նաեւ կառավարիչի եւ նահանգային ու տեղական այլ պաշտօններուն ձգտող թեկնածուներուն:

Քալիֆորնիոյ կառավարիչի ընտրութիւններուն առթիւ ՀԱԽ իր գորակցութիւնը կը յայտնէ Դեմոկրատ ձեռքի Պրաունի վերընտրութեան:

Փոխ կառավարիչի պաշտօնին համար ՀԱԽ կը գորակցի Կեյվըն Նիւսըմի վերընտրութեան: Նոյնպէս՝ Նահանգային դատախազի պաշտօնին համար Փէմըլա Հէրիսի վերընտրութեան:

Ներկայացուցիչներու Տան ընտրութիւններուն ՀԱԽ կը գորակցի Նէնսի Փլոսին, Ատամ Շիֆին, Պրէտ Շըրմընին, ձեռքի Սքիթըրին, ձուտի Չուին եւ այլոց:

Նահանգային Խորհրդարանի թեկնածուներու շարքին ՀԱԽ-ի գորակցութիւնը կը վայելեն Խաչօ Աշճեան, Ատրին Նազիրեան, Մայք Կաթօ եւ շարք մը ուրիշներ:

Քալիֆորնիոյ Շէրիֆի պաշտօնին համար ՀԱԽ կը գորակցի ձեռք ՄէքՏոնըլին, իսկ Լոս Անճելէսի Գաւառի վերակացուներու Խորհուրդի 3-րդ ընտրաշրջանէն ներս Պոպի Շրալըրին:

ՀԱԽ-ի պաշտպանած թեկնածուներու ամբողջական ցանկը կարելի է տեսնել «Մասիս» անգլերէն բաժինէն ներս:

## Ֆրանսուա Օլանտ Սերժ Սարգսեանին Եւ Իլիամ Ալիեւին Առաջարկած Է Խաղաղութեան Համաձայնագիր Պատրաստել

Հոկտեմբերի 27-ին, դարաբաղեան հարցի շուրջ Փարիզի մէջ տեղի ունեցած գագաթի ժողովի ընթացքին Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն դիմելով, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանտ Սերժ Սարգսեանին եւ Իլիամ Ալիեւին առաջարկած է Հարաբաղեան հակամարտութեան հարցը առաջ շարժելու համար համընդգրկուն խաղաղութեան համաձայնագիր մշակել:

Էլիզաբէթ Կլապատի մամուլի ծառայութիւնը հաղորդեց, որ գագաթի ժողովի ընթացքին Ֆրանսիայի դեկավարը խօսած է երկու կողմերու յարաբերութիւններուն մէջ գոյութիւն ունեցող լարուածութեան արդիւնաւէտ նուազեցման անհրաժեշտութեան մասին:

Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները որոշած են անցնել կարմիր խաչի Միջազգային կոմիտէի հովանիին տակ հակամարտութեան ժամանակ անյայտ կորսուածներու մասին տեղեկութիւններու փոխանակման:

Ֆրանսուա Օլանտ նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի դեկավարներուն կողմէ ըրած է բանակցութիւններու ճանապարհով դարաբաղեան հակամարտութեան ամուր կարգաւորման ուղղութեամբ աշխուժացնել ջանքերը՝ միջազգային իրաւունքի սկզբունքներուն համապատասխան եւ Միսնկի խումբի համանախագահներուն կողմէ սահմանուած սկզբունքներու հի-



Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները Փարիզի մէջ տեղի ունեցած բանակցութիւններուն ընթացքին

ման վրայ: Նա ըսած է, որ «ստատու-քոն» անընդունելի է:

Բացի այդ, Ֆրանսիայի նախագահը Հայաստանի եւ Ատրպէյճանի դեկավարներուն կողմէ ըրած է տարաձայնութիւններու յաղթահարման եւ իրենց բնակչութիւնը խաղաղութեան նախապատրաստելու համար անհրաժեշտ քաղաքական կամք դրսեւորել:

Ֆրանսիայի նախագահին կողմէ, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն ի պատիւ՝ Էլիզաբէթ Կլապատին ներս կազմակերպուած երեկոյան ընթացքին ժամանակ Ֆրանսուա Օլանտ եւ իր հիւրերը աւելի լայնօրէն քննար-

կած են կովկասեան տարածաշրջանի գարգացման վերաբերեալ հարցերը:

Ըստ ֆրանսական աղբիւրներու, երեք նախագահներու հանդիպման ընթացքին տիրած է հիւանալի մթնոլորտ:

Ֆրանսիայի նախագահի մասնակցութեամբ տեղի ունեցած գագաթի ժողովին առաջ, Սարգսեանի եւ Ալիեւի միջեւ, ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու մասնակցութեամբ տեղի ունեցած են բանակցութիւնները:

«Այսօրուայ հանդիպումը ես

Շաբ.ը էջ 4

## «Հայկական Հարցը Թուրքիոյ Համար Ամենակարեւորը Է». Էթիէն Մահճուպեան

Թուրքիայի վարչապետի գլխաւոր խորհրդական նշանակուած հայազգի Էթիէն Մահճուպեան յայտարարած է, թէ Թուրքիոյ համար Հայկական հարցը ամենակարեւոր հարցը չէ:

Արաբական «Ալ Զազիրա» հեռուստաընկերութեան թրքական բաժինի թղթակցի հետ իր գրույցի ընթացքին Մահճուպեան ըսած է, թէ քուրտերի եւ միւսներու համար Թուրքիոյ ներկայ իշխանութիւններէն աւելի լաւը չկայ:

Լրագրողի այն հարցին, թէ Մահճուպեանի հայ ըլլալը պիտի օգնէ՞ Հայկական հարցի լուծման, Մահճուպեան պատասխանած է. «Եթէ քուրտը նշանակուէր, բնականաբար, իր նպաստը կունենար քրտական հարցի կարգաւորման, ալեւ ի նշանակուէր, ալեւինքը կարգերի կարգաւորման կը նպաստէր: Ես հայ եմ, իհարկէ, ես ալ Հայկական հարցի կարգաւորման մէջ իմ նպաստը կունենամ:

Մահճուպեան աւելցուցած է որ, Հայկական հարցը Սակայն, Թուրքիոյ ամենակարեւոր հարցերէն չէ: Բացի այդ, ինք Թուրքիոյ հայ համայնքը ներկայացնելու լիազօրութիւններ չունի, իսկ այդ



Թուրքիայի վարչապետի գլխաւոր խորհրդական նշանակուած հայազգի Էթիէն Մահճուպեան

հարցի գլխաւոր դերակատարը Թուրքիոյ հայկական համայնքն է եւ Հայկական սփիւռքը:

Թուրքիոյ վարչապետ Ահմէտ Դավութօղլուի հրամանով Պոլսահայ լրագրող Էթիէն Մահճուպեան նշանակուած է վարչապետի գլխաւոր խորհրդական:

Յայտնենք որ, թրքական ազգայնական շրջանակներ բողոք յայտնած են Մահճուպեանի նշանակման առթիւ:

## Ցեղասպանութեան 100-ամեակի Յանձնաժողովը Իր Աշխատանքները Կ'աւարտէ Դեկտեմբերին

Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովը իր աշխատանքները կ'աւարտէ 2014-ի Դեկտեմբերին: Այդ մասին Հոկտեմբեր 28-ին, Հայաստանի Խորհրդարանէն ներս տեղի ունեցող 2015-ի տարեկան հանրապետութեան պետական բիւջէի նախագիծի քննարկումներուն ժամանակ յայտարարեց ֆինանսաներու նախարարի առաջին տեղակալ Պաւել Սաֆարեան:

Անոր համաձայն, միջգերատեսչական յանձնաժողովը արդէն կ'աւարտէ իր աշխատանքները, որոնց շարքին՝ ծրագիրներու նախահաշիւները: «Ապագայ ծախսումների ֆինանսական գնահատականները մենք կարող ենք ներկայացնել միայն դրանից յետոյ: Եթէ դա տեղի ունենայ բիւջէի ընդունումից յետոյ, ապա մենք այդ գումարները կը յատկացնենք կառավարութեան պահուստային միջոցներից», ըսած է Պաւել Սաֆարեան:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ռոբերդ Քոչարեանը Շահագրգռուած է, Որ Հոկտեմբերի 27-ը Չբացայայտուի» Արամ Սարգսեան

Հոկտեմբերի 27-ի ահաբեկչութեան հետեւանքով գոհուած վազգէն Սարգսեանի եղբայրը՝ «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի նախագահ Արամ Սարգսեանը, Հոկտեմբերի 27-ի գործը համարում է չբացայայտուած: Նա համաձայն է ՀՀ շատ քաղաքական գործիչների այն տեսակէտի հետ, որ Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնը արտաքին միջամտութեան հետեւանք է, սակայն կարծում է, որ եթէ ներքին համապատասխան ծառայութիւնները անթոյլատրելի անգործութեան մէջ չլինէին, հնարաւոր կը լինէր խուսափել ողբերգութիւնից:



«Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեան

«Գործընթացները եւ դատաքննութեան զարգացումը յուշում էին, որ գործող նախագահ Ռոբերդ Քոչարեանը շահագրգռուած է, որ գործը չբացայայտուի: Ինչ-ինչ բաներից վախենալով ամէն օրը ընթերցում էր էլ գործի նախաքննութիւնը, դատաքննութիւնը արագացնում էր, դանդաղացնում էր: Էս էն գործն էր, որի բացայայտումը պիտի ցոյց տար, թէ ովքեր են Հայաստանի թշնամիները»,- այս մասին Հոկտեմբերի 27-ին, «Շուաբուր» պանթէոնում լրագրողների հետ գրոցում ասաց Արամ Սարգսեանը:

Արամ Սարգսեանը նշեց, որ Հոկտեմբերի 27-ը բացայայտուած չի կարելի համարել, քանի որ եւ իր, եւ հասարակութեան մօտ կան բազմաթիւ հարցեր. «Հասարակութեան մօտ բազմաթիւ հարցեր կան՝ սկսած Հոկտեմբերի 27-ի կազմակերպումից, գէնքերը Աժ տանուլուց, էլ կրակոցներից իւրաքանչիւր գոհուածի առանձին գոհուելու պայմանները: Անհասկանալի է, որ երկրի նախագահը գնում է բանակցութեան, երկու ժամ առաջ սենեակ են պատրաստում նախագահի համար եւ այդ սենեակը չի գաղտնալս-

ում: Իսկ եթէ գաղտնալսուել է, ո՞ւր են այդ գաղտնալսուածի ձայնագրութիւնները, ի՞նչ երրորդ ձայնագրութեան մասին էր խօսում Տիրգրան Նաղդալեանը:

Լրագրողի այն հարցին, թէ ինչպիսին կը լինէր Հայաստանը, եթէ չլինէր Հոկտեմբերի 27-ի ողբերգութիւնը, Արամ Սարգսեանը պատասխանեց.

«Ես համոզուած եմ հաւատարմացած եմ, որ բացարձակ այլ Հայաստան կունենայինք՝ ճանաչելով թէ վազգէն, թէ Կարէն Դեմիրճեանին, թէ «Արդարութիւն եւ դաշինք» այդ գործընթացը, որն սկսեց հիմք դնելով ժողովրդավարութեան: Հաւատարմացէք, որ վազգէն Սարգսեանը էսօրուայ այս իշխանութիւնների վարած ընտրութիւնների նման ինքն էլ կարող էր, առանց Կարէն Դեմիրճեանի, Հանրապետականով մեծամասնութիւն վերցնել: Բայց վազգէն յատակ հասկացաւ, որ էդ ճանապարհը փակուղային է, էդ փակել է պէտք: Արժանապատուութիւն ունէր այս երկիրը, տարածաշրջանում գործող էր դարձել»:

«Իշխանափոխութիւն Կը Լինի Այն Ժամանակ, Երբ Յունանեանները Ողջ Չլինեն»

Արդեն 15 տարի է անցել Հոկտեմբերի 27-ի ողբերգական դէպքերից, սակայն այսօր էլ յայտնի է նոյնքան, որքան 15 տարի առաջ:

Դեմիրճեանների շահերի ներկայացուցիչ Աշոտ Սարգսեանը վստահ է, որ քաղաքական կամքի առկայութեան դէպքում հնարաւոր կը լինի բացայայտման ուղղութեամբ լուրջ ձեռքբերումներ ունենալ. «Եթէ համադրենք քրէական գործի նիւթերը դատավարութեան նիւթերի հետ, ապա կարող ենք ասել, որ բաւականին մեծ հնարաւորութիւններ կան, որ կազմակերպիչների մասով կատարուեն քննչական գործողութիւններ, եւ առաջընթաց լինի: Բայց դրա համար անհրաժեշտ է կամք: Եթէ իշխանութիւնը ցանկութիւն չունի, տուժողների իրաւաջաջորդներն ինչպէ՞ս կարող են հասնել գործի բացայայտմանը»:

«Ա1+»-ին տուած հարցազրոյցում Աշոտ Սարգսեանը չի շեղուում է, որ ինքը լուրջ միջնորդութիւններ է արել, սակայն դրանք չեն իրագործուել. «Ես ներկայացրել եմ երեք միջնորդութիւն, որոնք երեքն էլ ընդունուել են քննչական խմբի կողմից, բայց երեքն էլ չեն կատարուել. մասնաւորապէս, քննչական փորձարարութիւն կատարել Նաիրի Բաղալեանի մասնակցու-

թեամբ, որպէսզի պարզենք, թէ կարմիր թղթապանակը որ երթուղիով հասաւ մինչեւ դահլիճի հանգստեան սենեակի մասը ցանկացած քրէական գործում կան նրբութիւններ, որոնց միջոցով կարելի է հասնել մեծ յաջողութեան. Սա հենց այդպիսի նրբութիւն էր: Սա վերաբերում էր նաեւ գէնքի առկայութեանը, քանի որ ես վստահ եմ, որ գէնքերը նախապէս եղել են Աժ-ում, եւ դրանք հեքիաթներ են, թէ գէնքերը դրսից են բերուել», - վստահեցնում է Աշոտ Սարգսեանը:

Նրանում, որ Հոկտեմբերի 27-ի վկաները մահանում են, Աշոտ Սարգսեանն առանձնապէս տարօրինակ բան չի տեսնում՝ տարիներ են, անցնում են, հնարաւոր է, որ մարդիկ հիւանդանան՝ մահանան, ու զգուշացնում է, որ քանի դեռ միւս վկաները ողջ են, պէտք է նրանց հետ իրականացնել որոշ փորձարարութիւններ:

Աշոտ Սարգսեանը գտնում է, որ գործը կարող է բացայայտուել, եթէ երկրում իրականացուի իշխանափոխութիւն: Իսկ իրական իշխանափոխութիւն կը լինի միայն այն ժամանակ, երբ մի քանի օր առաջ ինքնապայան կամ յանկարծամահ լինեն երեք հոգի՝ Նաիրի, Կարէն Յունանեաններն ու Էդիկ Գրիգորեանը:

«Դ. Յարութիւնեան. Ոեւ Սէկը Ոեւ Սէկին Իշխանափոխութիւն Չի Կարող Պարտադրել»

«Հայաստանում որեւէ մէկը, որեւէ մէկին իշխանափոխութիւն չի կարող պարտադրել», - լրագրողների հետ զրոյցում յայտարարեց Կառավարութեան աշխատակազմի ղեկավար- նախարար Դաւիթ Յարութիւնեանը: Նրա կարծիքով, անգամ մարդկային ու ֆինանսական աննախադէպ ռեսուրսը երեւակին չի օգնի յաջողութեան հասնել մէկ պարզ պատճառով? Իշխանափոխութեան հիմքեր չկան:



Կառավարութեան աշխատակազմի ղեկավար- նախարար Դաւիթ Յարութիւնեան մեծ հաշուարկ չէմ կարող ներկայացնել, թէ ինչ ռեսուրսների վրայ կարող է գործող իշխանութիւնը փորձել ընդդիմանալ այս շարժմանը»,- ասաց նա:

«Դուք թերագնահատում եք այլ ռեսուրսը, այսինքն, այն ռեսուրսը, որն առկայ է նոյն ընտրութիւնների ժամանակ, այո, յաղթած իշխանական կուսակցութեան մօտ: Ցանկացած երկրում, որտեղ կամացկամաց ձեւաւորում է երկբեւեռ քաղաքական համակարգ, ռեսուրսները կենտրոնանում են այստեղ եւ այնտեղ: Այս պարագայում, ռեսուրսը չէ, որ հիմնական դերակատարում է խաղալու», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Կառավարութեան աշխատակազմի ղեկավարը:

«Այո, մենք կը ցանկանայինք համագործակցել ընդդիմութեան հետ, բայց եթէ մենք լսենք նոյն կրկներգը, ապա համագործակցութեան մասին կարելի է մոռանալ:

Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ Գագիկ Զանգիրեանը կարծում է՝ 2008-ի համեմատ ընդդիմութեանը հակադրելու իշխանութեան ռեսուրսներն էլ այն չեն, նուազել են:

«Համաժողովրդական շարժման ժամանակ ընդդիմութեան դէմ օգտագործուած ռեսուրսի 70-80 տոկոսը հիմա ուղղակի պիտանի չէ գործադրելու: Ռեսուրսի մի մասը՝ զգալի հատուածը, արդեն իրենք են ընդդիմադիր, միւս մասը դժգոհ է իշխող ռեժիմից, մէկ այլ մասը գործադրուել է, բայց հետեւանքները մինչեւ հիմա չեն մարսել, նկատի ունեմ բանակի կիրառումը, մարտի 1-ի սպանութիւնները: Ես

Զանգիրեանի խօսքով՝ արտահերթ նախագահական ու խորհրդարանական ընտրութիւնների անցկացումը անհրաժեշտութիւն է, ու հնարաւորինս շուտ:

Զանգիրեանն ասում է, գործող ընտրական օրէնսգիրքը կեղծիքների հանրազիտարան է, դրա դէմն առնել է պետք նախ եւ առաջ ընտրողների ցուցակները հրապարակելով:

«Մեր ընտրացուցակներում ընդգրկուած է 2 միլիոն 400 հազարից աւելի մարդ: Հաւատացէ՛ք ինձ, իշխանութեան կուլիսներում շատ լաւ գիտեն, որ Հայաստանում այդքան բնակչութիւն չկայ: Հետեւաբար ընտրութիւնների թափանցիկութեան, արդարութեան եւ այլնի մասին խօսակցութիւններն անիմաստ են, որովհետեւ որեւէ այլ դեմոկրաֆիկական ցուցանիշ հանրապետութիւն չի աճում, բացի ընտրողների թուից», - ասաց ՀԱԿ-ի ներկայացուցիչը:

Ընտրական Օրէնսգրքի Փոփոխութիւնից Յետոյ՞ Ե եռեակն Իշխանափոխութիւն Պահանջելու

Խորհրդարանական ոչ իշխանական երեք ուժերը՝ ԲՀԿ-ն, ՀԱԿ-ն ու «Ժառանգութիւնը» գնում են ամբողջական իշխանափոխութեան, սակայն թէ ինչպիսի յաջորդական պահանջներով դա կը լինի, երեակը չի յայտարարելու: Այս մասին Հոկտեմբերի 29-ին, լրագրողների հետ զրոյցում ասաց Աժ ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Մարգարեանը: Նրա խօսքով՝ իրենք մեծացնելու են ճնշումն իշխանութիւնների վրայ, որից յետոյ պարտադրելու են լուծել խնդիրները, փոփոխել ընտրական օրէնսգիրքը:

«Դրանից յետոյ մենք արդէն կը գնանք ընտրութիւնների, ամբողջը չենք յայտարարելու: Մի բան յատակ է՝ մենք մղում ենք պայքար՝ յանուն համակարգի», - նշեց Ստեփան Մարգարեանը:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը «նորմալ» է վերաբերում Հայաստանի՝ Եւրասիական տնտեսական միութեանը: Այս մասին այսօր՝ հոկտեմբերի 29-ին, լրագրողների հետ զրոյցում ասաց Աժ ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Մարգարեանը՝ պատասխանելով հարցին, թէ կուսակցութիւնն ինչպէս է վերաբերում ԵՏՄ-ին անդամակցելուն:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը «նորմալ» է վերաբերում Հայաստանի՝ Եւրասիական տնտեսական միութեանը: Այս մասին այսօր՝ հոկտեմբերի 29-ին, լրագրողների հետ զրոյցում ասաց Աժ ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Մարգարեանը՝ պատասխանելով հարցին, թէ կուսակցութիւնն ինչպէս է վերաբերում ԵՏՄ-ին անդամակցելուն:

ՀԱԿ-ը Յոյս Ունի Համոզել Ծառուկեանին

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «ԲՀԿ-ական մեր աղբիւրները յայտնում են, որ ՀԱԿ կուսակցութեան լիդերները Հոկտեմբերի 24-ի հանրահաւաքից առաջ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկեանին փորձել են համոզել, որ հանրահաւաքից յետոյ նստացոյց սկսեն: Ծառուկեանը, սակայն, կտրականապէս դէմ է արտայայտուել այդ գաղափարին: Նստացոյցին կողմ է եղել նաեւ «Ժառանգութիւնը»: Յիշեցնենք՝ այդ մասին հարթակից յայտարարեց նաեւ կուսակցութեան առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանը, իսկ դեռ հանրահաւաքից առաջ տեղի ունեցած խորհրդարանական ճեպագրողների ժամանակ Աժ «Ժառանգութիւն» խմբակցութեան քարտուղար Ռուբիկ Յակոբեանը յայտարարել էր, որ մի շարք տեխնիկական հարցեր կան, բայց յոյս ունի, որ մինչ հանրահաւաքը երեակի առաջնորդներն ընդհանուր համաձայնութեան կը գան: Համաձայնութիւն, փաստօրէն, ձեռք չէր բերուել: Այդուհանդերձ, ՀԱԿ-ը տեղի չի տալիս եւ յոյս ունի, որ դեռ կը կարողանայ Ծառուկեանին համոզել՝ գոնէ յաջորդ հանրահաւաքից յետոյ նստացոյց սկսել»:

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «ԲՀԿ-ական մեր աղբիւրները յայտնում են, որ ՀԱԿ կուսակցութեան լիդերները Հոկտեմբերի 24-ի հանրահաւաքից առաջ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկեանին փորձել են համոզել, որ հանրահաւաքից յետոյ նստացոյց սկսեն: Ծառուկեանը, սակայն, կտրականապէս դէմ է արտայայտուել այդ գաղափարին: Նստացոյցին կողմ է եղել նաեւ «Ժառանգութիւնը»: Յիշեցնենք՝ այդ մասին հարթակից յայտարարեց նաեւ կուսակցութեան առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանը, իսկ դեռ հանրահաւաքից առաջ տեղի ունեցած խորհրդարանական ճեպագրողների ժամանակ Աժ «Ժառանգութիւն» խմբակցութեան քարտուղար Ռուբիկ Յակոբեանը յայտարարել էր, որ մի շարք տեխնիկական հարցեր կան, բայց յոյս ունի, որ մինչ հանրահաւաքը երեակի առաջնորդներն ընդհանուր համաձայնութեան կը գան: Համաձայնութիւն, փաստօրէն, ձեռք չէր բերուել: Այդուհանդերձ, ՀԱԿ-ը տեղի չի տալիս եւ յոյս ունի, որ դեռ կը կարողանայ Ծառուկեանին համոզել՝ գոնէ յաջորդ հանրահաւաքից յետոյ նստացոյց սկսել»:

# ԼՈՒՐԵՐ

## Ադրբեջանցի Ջետախոյզները Մասամբ Ընդունել են Մեղքը

ԼՂՀ-ում կալանաւորուած ադրբեջանական հետախուզական-դիւերսիոն խմբի անդամները մասամբ ընդունել են մեղքը:

ԼՂՀ առաջին ատենանի ընդհանուր իրաւասութեան դատարանում Հոկտեմբերի 27-ին դատաւոր Անատոլի Թադեւոսեանի նախագահութեամբ ընթանում է Դիլիճամ Ասկերովի եւ Շահբազ Գուլիեւի գործով դատավարութիւնը, որոնց մեղադրանքներ են առաջադրուել ԼՂՀ ՔՕ մի շարք յօդուածներով:

Մեղադրեալները շահերը դատարանում պաշտպանում են պետական (պետութեան կողմից նշանակուած-իմբ.) պաշտպաններ էրիկ Բեգլարեանը եւ Արկադի Իսրայելեանը: Մեղադրողը աւագ դատախազ Կարէն Գաբրիէլեանն է:

Երկու մեղադրեալներն էլ յայտարարել են, որ մեղքը մասնակի են ընդունում: Ասկերովը յայտարարել է, որ մեղադրանք, թէ 2005 թ. Շահբազ Գուլիեւի հետ եւ 2007 թ. երկու անգամ՝ մէկը ոմն Բաֆֆիի եւ Վազիֆի, միւսը՝ միայնակ, գերեզման այցելելու նպատակով, Ադրբեջանի եւ ԼՂՀ-ի սահմանն ապօրինի հատել է: Միեւնոյն ժամանակ, 2014 թ. Շահբազ Գուլիեւի եւ Հասան Հասանովի հետ սահմանն ապօրինի հատելու մեղադրանքը նա ընդունել է: Ասկերովը լրտեսութեան մէջ ներկայացուած մեղադրանքը չի ընդունել, ինչպէս եւ անչափահաս Սմբատ Յականեանի առեւանգման եւ սպանութեան մեղադրանքը: Ընդ որում՝ ապօրինի գէնք կրելու, փող, փաստաթուղթ եւ անասուն յափշտակելու մեղադրանքներն ընդունել է:

Շահբազ Գուլիեւը եւս մասնակի ընդունել է մեղքը: Ըստ Գուլիեւի պնդման՝ 2005 թ. «ինքը չի իմացել

սահմանի առկայութեան մասին»: 2014 թ. նա հատել է սահմանը՝ անտեղեակ լինելով: «Դիլիճամն ասաց՝ ոչ ոք չկայ, մենք հաւատացինք», - յայտարարել է Գուլիեւը: Ապօրինի գէնք կրելու մեղադրանքը եւս նա մասնակի է ընդունել:

ԼՂՀ ոստիկանութեան տուեալով՝ Ադրբեջանի քաղաքացիներ Շահբազ Գուլիեւը (1968թ. ծնուած), Դիլիճամ Ասկերովը (1960թ. ծնուած), ինչպէս նաեւ սպանուած երրորդ մասնակից Հասան Հասանովը, ունենալով գէնք եւ զինամթերք, 2014թ. Յունիսի 29-ին ապօրինաբար հատել էին ԼՂՀ պետական սահմանը եւ ներխուժել Հանրապետութեան Շահուեանի շրջանի տարածք՝ հետախուզական գործողութիւնների նպատակով: Տուեալ անձինք յատուկ առաջադրանքոց տեղեկութիւններ էին հաւաքել եւ լրտեսական գործունէութիւն իրականացրել: Ասկերին, նրանք գէնքի գործադրմամբ Յուլիսի 4-ին առեւանգել էին ԼՂՀ անչափահաս քաղաքացի Սմբատ Յականեանին, որի մարմինը հրազենային վնասուածքներով յայտնաբերուել էր Յուլիսի 15-ին Քարվաճառ եւ Մանաշիթի համայնքների միջեւ ընկած անտառային զանգուածում: Բացի այդ, Հասանովը Յուլիսի 11-ի երեկոյան Վարդէնիս-Քարվաճառ ճանապարհի 32-րդ կմ-ին ազգային ատելութեան հողի վրայ հրազենով սպանել էր Երեւանի բնակիչ Սարգիս Աբրահամեանին (1971թ. ծնուած), իսկ Կոտայքի մարզի Ձորաղբուջր գիւղի բնակիչ Կարինէ Դաւթեանին հրազենային վնասուածքներ էր հասցրել: Նա գինուած դիմադրութիւն էր ցոյց տուել ձերբակալման ժամանակ եւ վնասագերծուել: Շահբազ Գուլիեւն ու Դիլիճամ Ասկերովը կալանաւորուել էին:

## Թուրքական Իշխանութիւնները Մտադիր են Անին Ընդգրկել ԵՌԻՆԵՍԿՕ-ի Մշակութային Ժառանգութեան Ցանկում

Թուրքիայի մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութիւնն աշխատանքներ է սկսել Հայկական թագաւորութեան Անի մայրաքաղաքը Միւսուրուած ազգերի կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի կազմակերպութեան՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգութեան ցանկում ընդգրկելու համար, տեղեկացնում է Hye Tert-ը:

Նախարար Օմեր Չելիքը նշել է, որ իրենք պատրաստուած են «տիրութիւն անել» քաղաքին եւ աշխատանքներ են սկսել այն ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում ընդգրկելու ուղղութեամբ:

2012թ.-ին, նախարարութեան աշխատանքների շնորհիւ, «Հազար ու մի եկեղեցիների» կամ «40 դռներով քաղաք» համարուող Անին ընդգրկուել էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում ներառուելու թեկնածուների ցուցակում: Այժմ Թուրքական իշխանութեան վերջնական նպատակն է մինչեւ 2016թ.-ն այն ընդգրկել տալ ցանկում, որպէսզի այն իր արժանի տեղը գտնի մարդկութեան մշակութային ժառանգութիւնների թւում:

Մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարար Օմեր Չելիքն ասում է, թէ ինքը հաստատակամ է Անատոլիայի բոլոր մշակոյթների պաշտպանութեան եւ մարդկութեան ժառանգութեանը նուիրաբերելու գործում:

Նախապատմական ժամանակներից տարբեր մշակոյթների կրող եւ Մետաքսի ճանապարհի՝ Կովկասի մուտքին գտնուող Անիում նախարարութեան վերահսկողութեամբ պեղումները, վերակառուցման եւ շրջա-



Կալքի բարեկարգման աշխատանքները այն թափով շարունակուած են:

Նախարար Օմեր Չելիքը տեղեկութիւններ է հաղորդել Թուրքիայում հայկական մշակութային ժառանգութեան ամենայայտնի կենտրոններից մէկը համարուող Անիում իրականացուող աշխատանքների մասին:

«Մենք միշտ հպարտացել ենք Անատոլիայի ապշեցուցիչ եւ մեծ ու պատմական ժառանգութեամբ: Մենք ցանկանում ենք անել այն, ինչ սազական է մեզ. այդ ժառանգութիւնը մարդկութեանը նուիրաբերել եւ թողնել պապապ սերունդներին: Թուրքիան այժմ առաջնորդող երկիր դառնալու ճանապարհին քայլեր է կատարում: Այդ քայլարշաւին որեւէ տեսանկիւնից բաց տեղեր թողնել չենք ուզում», - ասել է նա:

## «ԵՏՄ Անդամակցութիւնը ՅՅ-ի Եկամուտների Կրայ Դրական Ազդեցութիւն Է Ունենալու»

Բոլոր վերլուծութիւնները ցոյց են տալիս, որ ԵՏՄ անդամակցութիւնը ՀՀ եկամուտների ու ՀՆԱ-ի աճի վրայ դրական ազդեցութիւն է ունենալու. Ազգային ժողովում լրագրողների հետ զրոյցում ասաց ֆինանսների փոխնախարար Պաւել Սաֆարեանը, ով ընդգծեց, որ իրենք օբիեկտիւօրէն չկարողացան պետական բյուջէի նախագծում արտացոլել ԵՏՄ մտնելու ռեալ հետեւանքները, որովհետեւ բիւջէն պարտաւոր էին աւելի շուտ ներկայացնել: «Մենք վստահաբար գիտենք, որ եկամտային մասն աւելի լաւն է լինելու՝ մաքսատուքերի բարձրացման հաշուին: Եթէ այդ եկամուտներն օգտագործենք ամբողջապէս, կարող ենք այդ գնահատականները տալ, դա կը բերի ՀՆԱ-ի աճի», - ասաց նա:

Հարցին՝ կանխատեսումներ կա՞ն, թէ ՌԴ-ից եկող ներդրումների եւ տրանսֆերտների նուազում կը լինի՞ եկող տարի, փոխնախարարը պատասխանեց. «Կանխատեսումներ, որպէս այդպիսին, չկան, բայց կայ հետեւեալը՝ մենք ունենք գնահատական, թէ ՅՈւլիսի մեր մակրոտնտեսական ցուցանիշների վրայ Ռուսաստանի տրանսֆերտների ազդեցութիւնն ինչքան է, պատժամիջոցները, որ կիրառուել են Ռուսաստանի վրայ,

դրանց ազդեցութիւնն ինչքան է, նաեւ ներդրումների ազդեցութիւնը ՀՆԱ-ի վրայ, եւ ինչու մեր ՀՆԱ-ն չաճեց: Լաւ է, թէ վատ, դա այլ հարց է, մարդիկ կան, որ միշտ մտածում են, որ իրենք աւելի լաւ գիտեն: Դրանց վրայ հիմնուել ենք, ու դրանք միշտ փոփոխական են: Երբ Ռուսաստանում եղաւ ամիս, երբ երկու անգամ կանխատեսումը՝ ՀՆԱ-ի վերաբերեալ, փոխուեց, ոչ մի ուսու չեղաւ, ասաց՝ հա ինչ իմար կառավարութիւն է, չէք կարում կանխատեսում անել», - բացատրեց նա:

Հարցին, թէ տարօրինակ չէ՞, որ ստուերի դէմ պայքարի միջոցառումներն իրականացուած են, ստուերը կրճատուած է, սակայն բիւջէն աճում է միայն 33 միլիարդով, որը գնաճի թողած հետեւանքն է, Պ. Սաֆարեանը պատասխանեց. «Տարօրինակ չէ, որովհետեւ եկամուտների վրայ երեք գործօն է ազդում՝ վարչարարութիւն, օրէնսդրութիւն եւ տնտեսական աճ: Դրանք միասնութեան մէջ պէտք է նայել, եւ եթէ մենք հիմա նայում ենք այս տարուայ բիւջէն, տնտեսական աճը բաւական ցածր է: Մենք դրել էինք 5.2%, բայց վերջին ամիսների դրութեամբ ունենք 2.6%: Բնական է չէ՞, որ դա ազդելու է բիւջէի մուտքերի վրայ բացասական»:

## Foreign Policy Journal. «ԵՏՄ-ի տնտեսական Յետեւանքները»

NEWS.am-ը զգալի կրճատումներով մէջբերում է «Foreign Policy Journal» թերթում տպագրուած ազգային անվտանգութեան մասնագէտ, Լոս-Անջելէսի Կասպեան հետազօտութիւնների ինստիտուտի փորձնակ Քրիստիան Գուտիերեսայի յօդուածը.

Եւրասիական տնտեսական միութիւնն իր շարքերում ընդունեց Հայաստանին, որն այդ պայմանագիրը ստորագրեց 2014թ. հոկտեմբերի 10-ին Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելաւոսի կողմից այն վաւերացուելուց յետոյ: Ուկրաինան, Մոլդովան եւ Վրաստանը ստորագրեցին ԵՄ-ի ասոցացման մասին համաձայնագիրը, իսկ, օրինակ Ադրբեջանը ԵՏՄ-ին միանալու պաշտօնական հրաւէր չստացաւ:

ԵՏՄ-ի ստեղծումը անդամեր կրնաներ, յատկապէս ծովային ելք չունեցող փոքր երկրներում, ինչպիսիք են Հայաստանն ու Ղրղզստանը, խոստանում է ներդրումներին ու աճին նոր ազդակ հաղորդել: Այդուհանդերձ, աշխարհաքաղաքա-

կան տեսակետից ԵՏՄ-ն կասպեան տարածաշրջանի ներսում եւս մէկ մակարդակով կը մեծացնի յարաբերութիւնների բարդութիւնը, այն դէպքում, երբ տարածաշրջանը կարծես թէ բաժանուել է երկու մասի, դարաբաղեան հակամարտութիւնը տարածաշրջանում դեռեւս լուծուած չէ:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը «յոյս է յայտնել, որ միութեանը անդամակցելուց յետոյ երկու տարուայ ընթացքում Հայաստանում դրական մակրոտնտեսական էֆեկտ կը գրանցուի»:

Անկասկած, ԵՏՄ-ն էլ աւելի կը մեծացնի անդամ-երկրների կախուածութիւնը Ռուսաստանից: Այն դէպքում երբ տնտեսական կապերը կը զարգանան երկու ուղղութիւններով, Ռուսաստանի տնտեսութիւնը կը գերակայի միւս անդամների նկատմամբ: Ռուսաստանը միւս անդամների վրայ ազդելու աւելի շատ լծակներ կը ստանայ: Հենց Ռուսաստանին է բաժին ընկնում ԵՏՄ-ի ՀՆԱ-ի ապշեցուցիչ՝ 87%-ը:

ցութիւններէն յետոյ լրագրողներու հետ իր ունեցած զրոյցի ընթացքին:

«Այս հանդիպման ընթացքում քննարկուեցին բազմաթիւ հարցեր, որոնք վերաբերում են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդ-

## Խաղաղութեան Համաձայնագիր Պատրաստել

Շարունակուած էջ 1-էն

կը բնորոշէի որպէս կոնստրուկտիւ, կառուցողական, օգտակար եւ անկեղծ», - յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարար էդուարդ Նալբանդեան, բանակ-

ծաշրջան՝ Մայիս ամսին եւ որոնք ողջունուել էին նաեւ եռանախագահների կողմից», - աւելցուցած է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը:

### ՈՒՐՈՒԿՈՒԷՅԻ ՇՐՋԱՆԻ ՍԴՅԿ-Ի ԱՏԵՆԱՊԵՏԸ՝ ՅԱՆԿԱՐԾԱՄԱՅ

Ցառով իմացանք Ս.Դ. Հ. Կ. ի Ուրուկուէի շրջանի վարիչ Մարմնի Ատենապետ՝ Ընկ. Տօքթ. Մարսէլ Գէօզկէրեանի վարչասան անակնկալ մասը, որ տեղի ունեցած է Երեքշաբթի 28 Հոկտեմբեր 2014-ի առաւոտեան, խոր սուգի մատնելով իր ընտանեկան, գաղափարական եւ բարեկամական շրջանակները:



Ուրուկուէի շրջանի վարիչ Մարմնին եւ գաղափարի ընկերներուն:

Ընկ. Տօքթ. Մարսէլ Գէօզկէրեան իբրեւ վիրաբոյժ, երկու գաւառներու հայր եւ հասարակական գործիչ՝ Ուրուկուէի հայ եւ օտար շրջանակներու կողմէ յարգուած եւ սիրուած անձնաւորութիւն մըն էր, որուն մահով համանուն շրջանը կը կորսնցնէ արժանիքներու տէր տիպար առաջնորդ մը:

Այս տիտղոս առիթով, Ս.Դ. Հ. Կ. ի, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան շրջանի օրկան «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը, իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն, Ս.Դ. Հ. Կ. ի

Հողը թեթեւ գալ վրադ եւ յիշատակդ վառ՝ սիրելի ընկեր, Տօքթ. Մարսէլ Գէօզկէրեան:

### ՊՐՆ. ՎԱՐՉԱՊԵՏ ԹԱՔՍԻՍԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԱՄԵՆԱՏԳԵՂՈՇ

#### ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Թուրքիոյ վարչապետ Աճեմ Տաւուտօղլուի կարծիքով Պոլսոյ Թաքսիմ կեդրոնական հրապարակը աշխարհի ամենատեղի հրապարակն է: Վարչապետը լրագրողներուն հետ խօսելով ըսած է, թէ քաղաքակրթութեանց եւ քաղաքներու մասին գիրք մը գրած է, որ շուտով պիտի հրատարակուի: Տաւուտօղլու նաեւ յայտնած է, թէ գիրքին մէջ Պոլսոյ մասին եղած բաժինը ինք գրած է Կէզիլի ղէպքերուն ընթացքին ու անգամ մըն ալ յի շեցուցած է, որ այդ հրապարակը եղած է հայերու գերեզմանա տուն ու եզրակացուցած, որ Թաքսիմը աշխարհի ամէնէն տեղի հրապարակն է:

խօսքինք տգեղ հրապարակներու մասին: Իրօք ո՞րն է հրապարակին տգեղը:

Քաղաքին կեդրոն ըլլալուն կամ անոր խճողուած ճամբաներուն մէջ եռացող աղմուկին մասին չէ խօսքը, ոչ ալ ծայրամասերուն գտնուող հին ու աղքատ թաղերուն մասին կը խօսի Պրն. վարչապետը: Կ'ենթադրեմ, որ Թաքսիմ հրապարակի տգեղ ըլլալը առնչուած է Հրանդ Տինքի արեան հետ: Ու նաեւ մեր նախահայրերու աճիւններուն հոն ըլլալուն հետ: Այդ աճիւններուն մասին նոյնպէս խօսուեցաւ Կէզիլի ղէպքերուն ատեն: Պարոն վարչապետին այս խօսքը զիս աւելիով պիտի մղէ իմանալու Թաքսիմ հրապարակին պատմական անցեալին մասին: Այդ »տգեղ« հրապարակին շուրջ ապրուած կեանքին մասին: Հոն արձանագրուած ղէպքերուն, դիպաշարին եւ յնարեղ թաղուած իմ նախահայրերու մասին:

Պէտք է նաեւ յիշեցնել, որ երբ արեւելեան քաղաքներուն մասին կը խօսուի, մենք երբեք գեղեցիկ քաղաք ըսելու չենք գործածեր: Քաղաքը արեւելքցիներու մօտ կեանքի, ղէպքերու եւ ըմբռնումներու շարունակուող հոսքին ամէնէն անկեղծ հանդիսավայրն է:

Հարկ կ'ա՞յ յիշեցնելու, որ իմ նախահայրերս նոյն »տգեղ« հրապարակներու կարօտը իրենց հետ կը փոխադրէին ամէն քայլափոխի: Յատկապէս Պոլիսը անոնց համար կը մնայ կարօտներուն ամէնէն վսեմը: Անոնք ամէնուրեք Պոլիսը տարած են իրենց հետ: Անոնք իրենց սրտերուն վրայ պատկերազարդած են անոր պատուհանները, անգիր ըրած անոր բանաստեղծներուն անուններն ու բարձր ձայնով երգած անոր երգերը: Անգամ չեն մոռցած անոր միտարէթներուն կոչնակին ձայնը կամ դարիւ-դարիւ պահպանուած եկեղեցիներուն ղօղանջները:

Պոլիսը անոնք սփռած են ամէն տեղ: Այդ քաղաքի կենսագրութիւնը կրած են իրենց արեան, յիշողութեան եւ երակներուն մէջ: Կտրուած այն թեւիկն պէս, որուն ծայրերուն կարմիրով գրուած պատմութիւններու հետքերը կան:

### ՀՀ ՍՓԻՒՔԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԼՍԵԼ Է ԻՐԱՆԱՅԱՅ ԱՆԿԱԽ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԲՈՂՈՔԸ ԵՒ ԽՈՍՏՈՒՄԵՐ ՏՈՒԵԼ

Սոյն թուի Հոկտեմբերի 22-ին, Թեհրանի Հայ մարզամշակութային «Րաֆֆի» համալիրում, ՀՀ Սփիւռքի նախարարը հանդիպեց Իրանահայ անկախ կառույցների Համադրող մարմնի հետ, որը հովանաւորում է ՀՄՄ «Րաֆֆի» համալիրի, Իրանահայ ազգային եւ մշակութային միութեան, Նարմաք եւ Մաջիդիէ քաղաքամասերի Աշխարհաստեաների հայկական կենտրոնների, «Իրանահայեր» լրատու ցանցի եւ «Արաքս» շաբաթաթերթի կողմից:



Եան ոգեկոչման 100-րդ տարելիցի յանձնախումբը ամբողջովին ենթակայ է ՀՅԴ-ի քմահաճոյքին:

Ծանօթացման եւ բարիգալստեան խօսքից յետոյ, Հրանուշ Յակոբեանը հաստատեց, որ ստացել է Իրանահայ անկախ կառույցների համադրող մարմնի, Հոկտեմբերի 1-ի, յղած բաց նամակը՝ Թեհրանի հայոց թեմում 100-ամեակի առիթով կուսակցականացուած յանձնախումբ կեանքի կոչուելու մասին եւ ցաւ է ապրել: Նա շեշտեց, որ «100-ամեակը այն շրջադարձային առիթն է, որ բոլորս պիտի միատեղուենք եւ միասնական աշխատենք եւ որեւէ այլ բացատրութիւն ընդունելի չէ»:

Նախարարի հարցադրմանը, թէ «Իչո՞ւ չեկաք Հայաստան-Սփիւռք համաժողովին», Մ. Քէշիշեանը պատասխանեց, որ «Երբ ձեր նախարարութիւնը Դաշնակցութեան հետ միասին, համաժողովից առաջ գրում է նրա վերջնական յայտարարութիւնը պարզ է, որ մենք չենք կարող մասնակցել նման համաժողովի»:

Հանդիմպան ընթացքում «Արաքս» շաբաթաթերթի խմբագիր Մովսէս Քէշիշեանը նախարարուհուն ծանօթացնելով անդամ կառույցների հետ, ասաց. «Նոյն մտահոգութեամբ եւ միասնական լինելու պահանջով գրաւոր եւ բանաւոր միջոցներով ապարդիւն երկխօսութեան մէջ մտանք Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի հետ, ապա ի լուր բոլորի հրապարակեցինք Յանձնախմբի բաց նամակը տեղեկացնելու այն տհաճ իրավիճակի մասին, որ ստեղծուել է ԹՀԹ Թեմական խորհրդի մենատիրական գործունէութեան պատճառով: Յիշեցնենք, որ Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից նշանակուած Յեղասպանութեան

Երկայ կառույցների պատասխանատուներն ու ներկայացուցիչները նաեւ որոշ բացատրութիւններ եւ հարցումներ ուղղեցին ՀՀ Սփիւռքի նախարարին:

Աւարտին Հրանուշ Յակոբեանը ներկայ կառույցների պատասխանատուների ու ներկայացուցիչների բազում հարցադրումներին անդրադառնալով, հաւաստեց, «Ես իմ վրայ եմ վերցնում միջնորդի դերը, որպէսզի ստեղծուի միասնական յանձնախումբ»:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. Գրիգոր Առաքելեանը, դեսպանատան մշակութային կցորդ Սահակ Եղիազարեանը, Իրանահայ անկախ կառույցների Համադրող մարմնի ներկայացուցիչները, միութեանականներ եւ մտաւորականներ:

«Արաքս» շաբաթաթերթ, Թեհրան

Անոր բոյրին, հացին, երանգներուն, անոր անձրեւներու ահեղ երգին, մեծ թաղումներուն ու անմահ մեռելներուն հետ բառերը տարբեր որակ կը ստանան: Կատարելի սէր մը կը կապէ մեզ այդ ամէն ինչին ու հոն է նաեւ, ուր մենք ճարպիկութիւն չենք ըներ ու չենք ուզեր ուրանալ մեր հարեւանները: Չենք ուրանար այն կեանքը, որ մեր նախնիները ապրեցան ու հոն փայտացելին թաւեայ երազներ: Ահա այդ Պոլսոյ մասին կը խօսիմ ես:

վերացնել այս աշխարհի երեսէն, այն տգեղութիւնը, որ նախնիներս քաղաքէ-քաղաք նետեց, աշխարհով մէկ սփռեց, պատէ պատ զարկաւ, վիրաւորեց ու չարչարեց: Այդ վաղեմի արիւնը, որուն բողբոջի կարկուտին ահաւոր ձայնը կը խլացնէ խաղաղութեան համար արձակած մեր բոլոր աղաղակները: Խաղաղութիւնը Պարոն վարչապետ, խաղաղութիւնը բաժնուած է տգեղութեան կարմիր թելով:

Այդ լեզուով կը փորձեմ խօսիլ իմ որդիներուն հետ: Կը փորձեմ, ճիգ կ'ընեմ, որ ատելութեան թոյն չըլլայ իմ բառերու մէջ ու գիտեմ, որ վէրքը մեծ է: Կ'աճապարեմ, կը սուրամ, կը փորձեմ անդրանցնիլ մեծ մահուան ժամանակը: Չեմ փոխեր հօր քաղաքին գոյնը: Չեմ գեղջեր անոր անցեալը, չեմ ուրանար ու գիտեմ, լաւ գիտեմ, որ իմ նախնիներս երկար կեցած են անոր փերուն դիմաց ու մոխրագոյն հացը կիսած իրենց հարեւաններուն՝ Աճեմտին եւ Օսմանին հետ:

Ո՞վ պիտի կտրէ այդ կարմիր թելը: Ո՞վ պիտի մաքրէ այդ քաղաքի արիւնն ու վերացնէ անոր «տգեղութիւն»ը:

Ո՞վ պիտի ընդունի մեզքի այն մեծ բաժինը, որ կայ ձեր ուսերուն ու գուցէ ատոր համար է նաեւ, որ ձեր ձեռքերուն, ձեր ուսերուն, ձեր հոգիին վրայ նստած է ծանր կշռաքարի մը կերպարանքով:

Ես չեմ խաբեր Պարոն վարչապետ: Ու հոռետորական թող չլինի, եթէ ըսեմ, որ ինձի համար Թաքսիմը աշխարհի ամէնէն գեղեցիկ, ամէնէն շինող հրապարակներէն մէկն է: Հոն են իմ մեռելները, հոն է նաեւ այն արիւնը, որ գիս կը բաժնէ Թուրքիայէն: Այն «տգեղութիւն»ը, որ մեզ հեռու կը պահէ Թուրքիայէն: Այն տգեղութիւնը, որ իմ նախահայրերս փորձեց

Արիւնը Պրն. վարչապետ մեզ կը հեռացնէ իրարմէ:

Մենք պէտք է աշխատինք մաքրել այդ արիւնը: Մաքրել բոլոր վէրքերը: Կարգի բերել ամէն ինչ, ու վերջնականապէս ծածկել սպին, որպէսզի մեր ու ձեր բոլոր հրապարակները դառնան անթերի ու խօսին մարդկութեան լեզուով:

Այն լեզուն, որ մեր անցեալին կու գայ ու կը պատմէ մեր ու ձեր հարեւանութեան մասին:

Առանց որի, առանց քէնի, առանց արեան Պրն. վարչապետ:

# 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999 15 ՏԱՐԻ ԵՏՔ, ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՃԻՐԸ՝ ՏԱԿԱԻՆ ԱՌԵՂԾՈՒԱԾ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-ԷՆ ԵՏՔ

## ԱՄՕԹՈՎ ՕՂԱԿՈՒԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ



### ԱԻՆՏԻՍՈՒԱԶՄԻԿ

Արդեն 15 տարիներ անցան այն օրեն, երբ նենգ զնդակներ խոցոտեցին մեր սիրտերը:

15 տարիներ է Վեր վերք մը տակալին կ'արհեստի՝ ցասուձի զգացումներով խուճկելով մեր հոգիները:

Իսկապես 15 տարիներ չկրցան ամոքել, անհետացնել կամ մոռցնել այն սպին, որուն կոտորանքները դեռ եւս կը մորմոքեն մեր ժողովուրդին զաւակները:

1999 Հոկտեմբեր 27-ին, ամօթի այն սեւ խարանը, որ դրոշմուցեալ մեր ժամանակակից պատմութեան էջերուն, կը մնայ անջնջելի իր հետեւանքներով եւ բացասական արձագանգներով:

Ո՞ր երկրի պատմութեան մէջ արձանագրուած է արդեօք այնպիսի՝ լպիրշուութիւն, քաղաքական-բարոյական սանձարձակութիւն, ընդունուած չափորոշիչներու կոպիտ ոտնահարում, երբ օր-ցերեկով կը գլխատուի երկրի մը ղեկավարութիւնը եւ այդ զարհուրելի ոճիրին հեղինակները (պատուիրատուները) կը մնան անպատիժ, ազատ ու արձակ եւ յետագային երկրին մէջ կը գրաւեն բարձր պաշտօններ:

Բոլորիս համար յստակ է, որ 1999 Հոկտեմբեր 27-ի ազգադաւ յանցագործութեան իսկական թիրախները նահատակուած ութ պետական-քաղաքական այրերը չէին սոսկ, այլ Հայաստանի բնականոն կեանքը, հունաւորուած յառաջ-

ընթացը եւ երկրին կայունութիւնը. իսկ նպատակը՝ տնտեսական-քաղաքական ազդեցիկութիւն եւ լծակներ ձեռք բերելու կարգ մը դիմակաւորներու գայթակղիչ երազանքը:

Հայաստանի յետ-անկախութեան շրջանի առաջին տարիներու ռազմա-քաղաքական ցնցումներէն, ընկերային-տնտեսական վերիվայրուումներէն եւ բարոյա-հոգեբանական ելեւէջներէն ետք պետական հեղինակութիւն կարէն Դեմիրճեան եւ Սպարապետ Վազգէն Սարգսեան երկեակը միասնաբար յոյսի եւ լոյսի նոր էջ մը բացած էին՝ Հայաստանը առաջնորդելով համեմատաբար յուսալի հորիզոններ: Հայաստանի տնտեսութեան եւ ներքին կեանքին ապահովութեան երաշխիք կարէն

Դեմիրճեան իր լայն ժողովրդականութեամբ ու անմնացորդ նուիրումով, իսկ բանակաշինութեան եւ յաղթական երկրի խորհրդանիշ Վազգէն Սարգսեան իր վճռական պահուածքով կրանիթեայ այն սրկներն էին, որոնք կրնային հետեւողական աշխատանքով եւ երկաթեայ կարգապահութեամբ Հայաստանը դարձնել ծաղկուն ու կայուն, պինդ ու հզօր: Սպարապետին իսկ բառերով՝ «21-րդ դարը մերն է լինելու...»:

Կ'ըսուի՝ անփոխարինելի մարդ չկայ: Սխալ է: Վերոնշեալ երկու հեղինակութիւնները հայրութեան համար անփոխարինելի էին եւ

Շար.ք էջ 17

### ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒԻ ԱԻԻԹԵԱՆ

Ահաբեկչութիւնը ունի զանազան դրդապատճառներ ու գործակատարներ, եւ ընդհանրապէս կը խլէ անմեղ զոհեր ու կը կատարուի պետական, քաղաքական, կրօնական եւ անձնական կիրքերէ հրահրուած:

Կար ժամանակ երբ ահաբեկչութիւնը արարք էր եւ արտայայտութիւն՝ անարդարութեան հանդէպ, քնացած մարդկային անտարբեր խիղճը շարժելու եւ անոր անպատիժ մնացած ոճրագործները պատժելու: Յետոյ դարձաւ ազգային դատեր հետապնդելու միջոց, բոլոր անոնց կողմէ, որոնք պետական ահաբեկչութեամբ մէջտեղէն կը վերցուէին կամ կ'անհետանային: Եւ ներկայիս կարծէք ան դարձած է անկարգ ծայրայեղականներու եւ կրօնամոլ ու ցեղապաշտ «պաշտօնաբեկ»ներու սարսափ եւ աւեր տարածելու անպատասխանատու ու անկազմակերպ արարք:

Շաբաթէ մը ի վեր խաղաղասէր մեր Գանատան ցնցուցեալ տեսնելով ահաբեկումը իր երկու անմեղ զաւակներուն, որոնց յանցանքն էր կարծես կրել մեր երկրի զինուորական զգեստը: Երկուքն ալ անմեղ զոհերն էին ծայրայեղական խուլիկաններու, որոնք բանաստեղծական իշխանութեանց կողմէ վտանգաւոր տարր նկատուելով կը հետապնդուէին: Խուլիկաններէն երկրորդը յետոյ փորձած էր մտնել Գանատայի փարլամենթի շէնքը՝ շարունակելու համար սառնասիրտ իր ահաբեկչութիւնը, երբ զգեստուցեալ պահակազունդին կողմէ:

Եւ այն ինչ որ պատահեցաւ հոս՝ Գանատայի մէջ այս շաբթուայ ընթացքին, ուր պատուաբեր արդիւնքով ահաբեկիչը փարլամենթի մուտքին զգեստուցեալ, նոյնը տեղի չունեցաւ տասնհինգ տարիներ առաջ, երբ ահաբեկիչներ մուտք գործեցին Հայաստանի Ազգային ժողովի շէնքը եւ ազգային մեր արժանա պատուութիւնը ոտնակոխեցին, սպաննելով Հայաստանի ազգային հերոս կոչուած վարչապետն ու փարլամենթի նախագահը

եւ անոնց հետ նաեւ վեց պետական ներկայացուցիչներ: Մեր հայրենի պետականութիւնը այդ ահաբեկչութեամբ զրկուեցաւ քաղելի ծառայութեան օգուտը այնպիսի մարդոց, որոնք կ'ու գէին եւ կրնային Հայաստանի անվտանգութիւնը աւելի ամրապնդել ու անոր վարչական յառաջխաղացքը արդիական նացնել եւ զայն ընկերային ծառայութեամբ օժտել: Թէեւ ահաբեկիչները ձեռքաւարուեցան եւ բանտարկուեցան, սակայն եւ այնպէս այդ անաւոր արարքին ետին կանգնող պատասխանատուները չմատնանշուեցան: Եւ ինչպէս ամէն արարք, որուն ետեւ կը կանգնին «գորաւորները» կը մնայ ծալքերով մութ ու անհետապնդելի, եւ կ'անյայտանան վկաններն ու վկայութիւնները, այս պարագային ալ հայրութիւնը կը սպասէ եւ գուցէ երկար սպասէ՝ իմանալու ինքնութիւնը պատասխանատու կողմերուն եւ ուժերուն:

27 Հոկտեմբեր 1999 թուականը, որ վերջ դրաւ սպարապետ Վազգէն Սարգսեանի եւ փորձագէտ կառավարիչ Կարէն Տեմիրճեանի բեղուն եւ օգտաշատ կեանքերուն, է՛ ու կը մնայ մեր ազգի արդի պատմութեան ամօթալի թուականներէն մէկը, եւ այն վայրը ուր «նահատակուեցան» անոնք, դժբախտաբար այդ արարքով պիտի ճանչցուի ամօթով օղակուած մեր Ազգային ժողովը:

Ահա թէ ինչով կը բացատրուի հայրենի ժողովուրդին հարցերուն եւ հոգերուն անտարբեր եղող Ազգային ժողովի մեծամասնական խմբաւորումին ներկայութիւնը, որուն ամէնօրեայ հետաքրքրութիւնը կարծէք դարձած է անտեսել ժողովրդային պահանջները եւ ծառայել մենաշնորհեալ «տիրակալներուն»:

27 Հոկտեմբերի ոճիրին ամօթով օղակուած մեր Ազգային ժողովը պարտական է մեր ազգին եւ հայրենիքին, օրէնքի համազօր տրամադրութեամբ եւ տնօրինութեամբ, հետապնդել եւ քղազերծել յանցագործները, որպէսզի մաքրէ քսուած արատը իր սրահի մուտքի ճակտէն:

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
Updated every Friday

<b>Bedros S. Maronian</b> 818/500-9585		<b>Siamanto B. Maronian</b> 818/269-0909	
SERVING THE COMMUNITY SINCE 1975 <i>More locations and more ways to service your insurance and financial needs</i>			
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101	
<ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>	
<b>Seniors 65 &amp; Up</b> Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits			
<b>Insurance coverage can help you financially!</b> Ապահովագրութիւնը Աճիրաճեղս է <i>Coverage &amp; Protection should be on the top of your priority list.</i>			

# ՄԱԿ-Ը ԻՆՉՈՒՄԵՐԺԵՑ ԹՈՒՐՔԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՊԱՅՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՈՒՐԴԻՆ

**ՅԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆԵԱՆ**  
«Քալիֆորնիա Քուրիեր» թերթի  
հրատարակիչ եւ խմբագիր  
www.TheCaliforniaCourier.com

Նախորդ շաբաթ Թուրքիոյ կառավարութիւնը շունդալից ասպտակ մը ստացաւ, երբ Միացեալ ազգերու կազմակերպութեան Ընդհանուր Ժողովին ջանքախիչ մեծամասնութեամբ մերժուեցաւ անոր դիմումը Ապահովութեան խորհուրդի կազմին մէջ ընդգրկուելու համար: Ըստ հուլիսեան, միջազգային հանրութիւնը կը մերժէր Թուրքիոյ անընդունելի քաղաքականութիւնը երկրին մէջ եւ անկէ դուրս:

Թուրքիոյ արտաքին գործոց նոր նախարար Մեւլութ Չաւուշօղլուն եւ վարչապետ Ահմետ Տաւուֆօղլուն մեծամտաբար կը կանխատեսէին այդ հեղինակաւոր աթոռին ապահովումը իրենց երկրին համար: Քուէարկութեան նախորդ գիշերը Չաւուշօղլուն ճոխ ինճոյք կազմակերպած էր ՄԱԿ-ի դեսպաններու համար Նիւ Եորքի աշխարհաճշգրիտ Ուաշտոնթի Ասթորիա պանդոկին մէջ:

Արտաքին գործոց նախարար Չաւուշօղլուն ՄԱԿ-ի պատուիրակներուն անձամբ լուսաբանելու ընկերակցութեամբ Նիւ Եորքի մէջ քանի մը օր անցընելէ ետք լաւատեսօրէն յայտնեց լրատուամիջոցներուն. «Կը կարծենք, թէ մեր բոլոր հիանալի ջանքերը, Աստուծոյ շնորհքով, իրենց արտացոլումը պիտի ունենան վաղուան քուէարկութեան վրայ: Ի հարկէ, ասիկա քուէարկութիւն է, ամէն տեսակ արդիւնք կրնայ արձանագրուիլ: Սակայն կը կարծենք, թէ Աստուծոյ կամքով, մենք պիտի ստանանք մեր կատարած աշխատանքին արդիւնքը»:

Վարչապետ Տաւուֆօղլուն նոյնքան լաւատես էր, որ Թուրքիան կրնայ հասնիլ պատմական յաղթանակի: Արդարեւ, ՄԱԿ-ի քուէարկութեան ընդամենը երկու օր առաջ անհպարտութեամբ յայտարարեց. Եթէ ընտրուինք, իսկ մենք կը հաւատանք, որ անոր հաւանականութիւնը շատ մեծ է, մենք պիտի ըլլանք աշխարհի առաջին երկիրը, որ երկրորդ անգամ կ'ընտրուի հինգ տարուան դադարէ ետք: Ասիկա ցոյց կու տայ Թուրքիոյ կարեւորութիւնը:

Ի դժբախտութիւն Թուրքիոյ կազմակերպողներուն՝ անոնց ապաստանները չարդարացան: Հակառակ Չաւուշօղլուի աշխույժ քարոզչական ջանքերուն եւ աստուածային միջամտութեան բոլոր ցանկութեան՝ ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովին 193 անդամ պետութիւններէն միայն 60-ը քուէարկեցին Թուրքիոյ օգտին, իսկ անոր մրցակից Սպանիան ստացաւ 132 քուէ՝ ընդգրկուելով Ապահովութեան խորհուրդին մէջ իբրեւ ոչ մնայուն անդամ, երկու տարի ժամկետով:

Ինչո՞ւ այս տարի Թուրքիան կորսնցուց 151 քուէներու կէսէն աւելին, գոր ստացած էր 2008 թուականին Ապահովութեան խորհուրդի անդամակցութեան յաջող դիմումին ընթացքին: Ահա՛ Թուրքիոյ այս անգամուան ձախողման հիմնական պատճառները.

- Թուրքիոյ անդամակցութեան դէմ մեծ թիւով երկիրներու եռանդուն քարոզարշաւը. ի թիւս այլոց՝ Հայաստան, Կիպրոս, Եգիպտոս, Յունաստան, Իսրայէլ, Սուրիա եւ Սէնտալան Արաբիա:

- Նախագահ Էրտողանի բոլոր հակամարտութիւնը հօգոր թուրք իսլամական կրօնապետ Ֆեթուլլահ Կիւլենի հետ, որուն իբրեւ հետեւանք՝

Թուրքիան կորսնցուց շաբաթ մը ամբողջական երկիրներու ձայները, ուր Կիւլենի հետեւորդները մեծ ներկայութիւն ունին: Ասիկա լուրջ տեղաշարժ է 2008 թուականէն ետք, երբ Կիւլենի կողմնակիցները մեծ թիւով ձայներ ապահոված էին Թուրքիոյ համար:

- Թուրքիոյ ղեկավարներու անհեռատես որոշումը՝ երկրորդ անգամ անդամակցութեան դիմելու, 2009-2010-ին Ապահովութեան խորհուրդին մէջ ընտրուելէ կարճ ժամանակ ետք: Թուրքիոյ վերընտրութիւնը կը գրկէր այլ երկիրներուն՝ ՄԱԿ-ի այդ կարեւորագոյն մարմնին անդամակցելու առիթէն:

- Տաւուֆօղլուի մեծամիտ նորոսմանեան նկրտումները թշնամացողներուն մերձաւորակցելու երկիրներուն դէմ մասը՝ շրջելով անոր «գերօ ինդիւրներ դրացիներուն հետ» քաղաքականութիւնը դէպի գերօ հարեւաններ՝ առանց ինդիւրներու... Pew հետազոտական կեդրոնի ուսումնասիրութիւնը կը հաստատէ, որ Թուրքիոյ անբաղձալի վարկանիշը ամբողջ Մերձաւոր Արեւելքի մէջ իջած է աննախադէպ ցած մակարդակի:

- Էրտողանի բռնապետական իշխանութիւնը իր երկրին մէջ, ներառեալ՝ ցուցարարներուն վրայ բանեցուած արիւնտոս ճնշումը Կեզի հանրապարտէզին մէջ, լրագրողներու բանտարկութիւնը եւ «Թուրքիոյ» ու «Դիմատետր» ընկերային հասարակական ցանցերու արգելափակումը: Անոր արհամարհական խօսքերը. «Ես թքած ունիմ, թէ ինչ կ'ըսէ միջազգային հանրութիւնը, զայրացուցած էին բազմաթիւ անձեր համայն աշխարհի մէջ»: Թուրքիոյ դէմ քուէարկութիւնը ՄԱԿ-ի անդամներու պատասխան կշտամբանքն էր Էրտողանին: Սեպտեմբերին ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովին մէջ նախագահ Էրտողանի ամբարտաւան ելոյթի ժամանակ պատուիրակներուն մեծ մասը լքեց դահլի-

ճը:  
- Լարուած յարաբերութիւնները Միացեալ Նահանգներու եւ Արեւմտեան Եւրոպայի հետ՝ ՏԱՀԵՇ-ի դէմ պատերազմին աջակցելէ հրաժարելու եւ օտար ժիհաստականներու կողմէ Թուրքիոյ սահմանէն քայլ մը անդին գտնուող քիւրտ քաղաքացիները չպաշտպանելու պատճառով: Ի պատասխան, աշխարհի ամէնէն ազդեցիկ մեկնաբանները կոչ ուղղեցին Թուրքիան վտարելու ՆԱԹՕ-էն եւ մերժելու անոր՝ Եւրոմիութեան անդամակցելու դիմումը: Դժգոհ ըլլալով Թուրքիոյ թշնամական դիրքորոշումէն՝ նախագահ Օպամա, Անգարայի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան շատ ցած մակարդակի պաշտօնեայ մը ուղարկեց Էրտողանի նախագահական երդման արարողութեան, Օգոստոս 28-ին:

Անտեսելով Ապահովութեան խորհուրդին մէջ Թուրքիոյ ձախողութեան այս բոլոր տրամաբանական պատճառները, արտաքին գործոց նախարար Չաւուշօղլուն իր երկրի պարտութիւնը կեղծօրէն պատճառաբանեց այն բանով, թէ չէ ուզած ոտնակոխել Թուրքիոյ արժէքները յանուն առաւել ձայներու: Այս ծիծաղելի յայտարարութեամբ հանդէս կու գայ այնպիսի երկրի մը արտաքին գործոց նախարարը, որ միլիոնաւոր տոյարներ լեցուցած է ամբողջ աշխարհի փոքրիկ կղզիպետութիւններու եւ ամբողջական աղքատ երկիրներու գանձարանները՝ ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովին անոնց ձայները գնելու համար:

Վերջապէս, Ապահովութեան խորհուրդին մէջ ընդգրկուելու ձախողութիւնը կը սահմանափակէ Թուրքիոյ կարելիութիւնները՝ շահագործելու ՄԱԿ-ի հօգոր կառուցը՝ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին առիթով համաշխարհային քայլերը խոչընդոտելու համար: Թարգմանեց՝ ՌՈՒԶԱՆՆԱ ԱԻԱԳԵԱՆ



## A Better Location. Now Open.

Excitement fills the air, as our new Beverly Hills Branch & Corporate Office are now open. Our beautiful, new office is more spacious, convenient and offers easy access parking with its own private, ground level lot.

Our new Beverly Hills Branch & Corporate Office are located at:

**8484 Wilshire Boulevard, Suite 100**  
**Beverly Hills, CA 90211**  
(Corner of Wilshire and La Cienega Boulevards)

PHONE: 323.602.2000 TOLL-FREE: 888.392.5265 FAX: 323.602.2190

<b>TALAL BEYDOUN</b> Director Executive Vice President, Marketing PHONE: 323.602.2015 EMAIL: TBeydoun@ehnbank.com	<b>ARA FERMANIAN</b> Director, Senior Vice President Business Development PHONE: 323.602.2003 EMAIL: AFermanian@ehnbank.com	<b>AMIRA MATAR</b> Senior Vice President Relationship Management PHONE: 323.602.2002 EMAIL: AMatar@ehnbank.com	<b>CAROLE SFEIR KAWKABANI</b> Vice President Business Development PHONE: 323.602.2011 EMAIL: CKawkabani@ehnbank.com
---	---	--	---

We invite you to stop by and talk to a personal banker today to get the higher interest and personal attention you deserve.



8484 Wilshire Boulevard, Suite 100 Beverly Hills, CA 90211 • TOLL-FREE: 888.392.5265 • EHNBank.com



### ԻՐԱՆԱՅԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ-ԵՐԳԻԾԱԳԻՐ ՆԵՐՍԷՍ ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԲԱԼԱՅԵԱՆԻ «ԿԱՐՕՏԸ ՅԱՅԻ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Շաբաթ, Օգոստոս 16ի առաւօտեան միութենականների հաւաքը, նուիրուած էր Միութեանս պատուոյ անդամ եւ «Տեղեկատու»ի պատասխանատու՝ Ներսէս Տ. Մեսրոպեան-Բալայեանի վերջերս լոյս տեսած «Կարօտը Հայի» քերթուածների ժողովածուին, 120 էջերէ բաղկացած:


Հաւաքի պատասխանատու Հիլտա Աֆթանդիլեանը բացումը կատարելով, շնորհաւորեց հեղինակին իր ճիշդ գրքի հրատարակման համար, բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ մասնաւորաբար շնորհաւորեց ծանօթ բանաստեղծ, իրանահայ եւ գալիֆորնիահայ գրողներու միութեան երկարամեայ նախագահ Գրիշ Դաւթեանին, օրեր առաջ Ամենայն Հայոց Հայրապետ Գարգին Բ.ի կողմէ «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին արժանանալու համար:

Ապա, վաստակաւոր կրթական գործիչ արձակագիր Ռուբէն Քէշիշեանը (Կորիւն) անդրադարձաւ գրքի բովանդակութեանը, կարդաց մի քանի քերթուածներ եւ դրուատանքի խօսքերով աւարտեց իր ելոյթը:

Խօսք առաւ բանաստեղ-երգի-ծագիր Երուանդ Իսկանդարեանը, որն նոյնպէս գնահատեց «Կարօտը Հայի» գրքի հեղինակին ու նորանոր յաջողութիւններ մաղթեց:

Ողջոյնի եւ շնորհաւորանքի խօսքեր ասաց բանաստեղծ Գրիշ Դաւթեանը եւ ծանրացաւ Ներսէս Տ. Մեսրոպեանի երգիծական ստեղծագործութիւններու վրայ:

Երկարամեայ միութենական եւ ներկայիս Միութեան քարտուղար Շաքէ Եղիազարեանը սրտագին եւ ջերմ խօսքերով գնահատեց



հեղինակի տարիներու վաստակը, գրական եւ միութենական աշխատանքները:

Անուանի երաժիշտ-երգահան Ալէք Բազուկեանը շնորհաւորեց «Կարօտը Հայի» գրքի ծնունդը եւ նորանոր յաջողութիւն մաղթեց: Նշելի է որ հանրածանօթ երգահանը ցարդ հեղինակի 10-ից աւելի քերթուածներ ձայնագրել է, որոնք լայն տարածում են գտել իրանում, Հայաստանում եւ այստեղ:

Երգերով հանդէս եկան մի քանի ներկաներ: Վերջում, գրքի հեղինակը իր խորին շնորհակալութիւնները յայտնեց հաւաքի պատասխանատուներուն, ելոյթ ունեցողներուն եւ բոլոր ներկաներուն ու գրքերը մակագրելով մէկական օրինակ նուիրեց մասնակիցներուն: Այնուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՅԱՅ ԱԲԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ «ՏԱԼՈՒ ՅՈԳԻՈՎ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ



Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան Պոսթոնի շրջանի Մանուկներու եւ Որբերու Յանձնախումբը մեծ յաջողութեամբ նշեց իրենց այս տարուայ «Տալու Հոգիով» բարեսիրական ճաշկերոյթը, Ուրբաթ, Սեպտեմբեր 26-ին, Wellesley Country Club-ի շքեղ սրահին մէջ: Օրուան հանդիսավար Միշել Միմուրեան բարի գալուստ մաղթեց Հայ Աւետարանական Ընկերակցութեան Գործադիր

Տնօրէն Պրն. Զաւէն Խանճեանի, որ իր կարգին իր ոգեշունչ խօսքերով խրախուսեց ներկաները: Յանձնախումբի անդամ՝ ճոյս ձանճիկիան, ներկայացուց նշանաւոր աճուրդավարը եւ հեռատեսիլի ճիշդ կայանի խօսնակ Մայք Ուէնքըմը, որուն նաեւ անուանեց տարուայ «Պատուաւոր Հայ»: Ծան Պատուական երրեակը ճոխացուց հանդիսութիւնը իրենց գեղեցիկ երաժշտութեամբ: Բոլոր հիւրերը ուրախ տրամադրութեան մէջ էին աճուրդի

### «2015. ՅԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ» ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԵՋ



Կիրակի, 19 Հոկտեմբեր 2014-ին, Դամասկոսի Սբ.Սարգիս եկեղեցու սրահին մէջ, յաւարտ Սուրբ Պատարագի, տեղի ունեցաւ «2015 Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը» խորագիրը կրող գիրքի շնորհանդէսը: Գիրքի հեղինակն է դամասկաբնակ հրապարակախօս տիար Սամիր Արպաշը: 2014-ին ամբարը հրատարակուած գիրքին շնորհանդէսը կը վայելէր Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդութեան հովանաւորութիւնը: Շնորհանդէսը կազմակերպած էր Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Դամասկոսի Մարմինը: Շնորհանդէսի երեկոյթին ներկայ էին Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Արմաշ Ս. Եպս. Նալպանտեանը, ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան՝ Տիար Արշակ Փօլատեանը, հրատակաւոր տնօրէն տրքթ. Նապիլ Թաամէն: Ցերեկոյթին, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Դամասկոսի Մարմինին անունով բացման եւ ներկաներուն բարի գալուստեան խօսքով հանդէս եկաւ տիար Սարգիս Պոտուսուգեանը եւ բովանդակալից ձեւով հիւրերուն ներկայացուց գիրքը: Ապա հեղինակը՝ տիար Սամիր Արպաշը, հանդէս

եկաւ եւ ներկայացուց իր իսկ հեղինակած գիրքը: Շնորհակալութեան եւ գնահատանքի խօսքով հեղինակը մեծարեցին Առաջնորդ Սրբազան Հայրը, ՀՀ Դեսպանը եւ հրատակաւոր տնօրէն տրքթ. Նապիլ Թաամէն:



Յաւարտ շնորհանդէսի ցերեկոյթին ներկաները կարելիութիւն ունեցան շնորհաւորելու հեղինակը եւ իր ստորագրութեամբ ունենալու արժէքաւոր այս գիրքը:

արդիւնքներու յայտարարութեան ընթացքին, գնահատելով բոլոր անոնք որոնք մեծ սիրով նուիրած էին այս նպատակին համար: Ծաշկերոյթի լման հասոյթը պիտի յատկացուի ԱՀԱԸ-ի մանուկներու եւ որբերու ծրագիրներուն? Հայաստանի եւ Արցախի մէջ:

Անդրադառնալով հանդիսութեան, ԱՀԱԸ-ի Գործադիր Տնօրէն Պրն. Խանճեան ըսաւ.- «Խնամքով ծրագրուած եւ կազմակերպուած միջոցառում մը: Շնորհակալութիւն եւ վարձքը կատար բոլոր սիրասուն, աշխոյժ եւ խանդավառ Յանձնախումբի անդամներուն»:

Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը հիմնադրուած է 1918-ին, որպէս

Քրիստոնէական կազմակերպութիւն, իր ծառայութիւնները մատուցանելու բոլոր անոնց որոնք օգնութեան կարիք ունին առանց խտրութեան: ԱՀԱԸ-ը իր այս համաշխարհային առաքելութիւնը կ'իրականացնէ պահպանելով շարք մը կրթական, աւետարանական, ընկերային ծառայութիւններ հայրենիքի եւ արտերկրի քանրեք տարբեր երկիրներու մէջ: Լրացուցիչ տեղեկութիւններու համար կրնաք այցելել ԱՀԱԸ-ի կայքէջը [www.amaa.org](http://www.amaa.org), կամ ուղղակի կապ հաստատել ԱՀԱԸ-ի կեդրոնին հետ -

31 West Century Road, Paramus, NJ 07652, հեռ. 201.265.2607, Ի-մէյլ - [info@amaa.org](mailto:info@amaa.org)

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԵՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680**



# Massis Weekly

Volume 34, No. 40

Saturday, November 1, 2014

## Presidents of Armenia and Azerbaijan Meet In Paris



PARIS (RFE/RL) — Armenian President Serzh Sargsyan and his Azerbaijani counterpart Ilham Aliyev on Monday held their third meeting in less than three months to discuss ways of settling the protracted conflict over Nagorno-Karabakh.

The negotiations between the two South Caucasus leaders took place in Paris upon the initiative of French President Francois Hollande.

**Վ.Գ.** - «Ժամանակի գետից» այս կողմ շատ ուրիշ ջրեր են հոսել: Լոյս են տեսել «Ոստանի վերջին ճամբորդութիւնը» եւ «Ջարմանակի իրադարձութիւններ 5-րդ փողոցում» գրքերս, որոնք թէեւ գրաքննադատական ուշադրութեան եւ ընթերցողական հետաքրքրութեան նոյն յաջողութիւնները չեն արձանագրել, բայց ոչ պակաս կարեւոր են ինձ համար: Սովորաբար ես կապուած եմ մնում վերջին գրքիս, եւ այս առումով հիմա «Ջարմանակի իրադարձութիւնների» գլխին եմ ամպեր կուտակուում, որովհետեւ յոյս ունեւմ առաջիկայ տարում աւարտել բազմաշար «Պօղոս-Պետրոս» վեպը:

**Գ.Թ.** - Յաճախակի է հնչում, որ հայ արդի արձակուրդ ժամանակակից հերոսի կերպարն աղօտ է կամ ընդհանրապէս բացակայում է: Ո՞վ է մեր իրականութեան հերոսը՝ ազատամարտիկը, պատգամաւորը, ստեղծագործողը, գործազուրկը, մուրացակար, օլիգարխը, պետական չիմովնիկը՝ միմեանց անհաղորդ, իրարից անջատ բնութագրերով... Գուցէ իրական բնորոշումը ժամանակն ինքն է, իսկ մնացեալը նրա տարբեր դրսեւորումներն են մոյն շրջանակի մէջ:

**Վ.Գ.** - Հերոսը մեր գաղափարագրերի ժամանակն է: Ստացանք երազած անկախ պետականութիւն՝ փրփուրը բերաններիս պաշտպանում ենք մայրաքաղաքում հայոց անկախ պետականութեան մոլի հակառակորդ Միկոյեանի արձան կանգնեցնելու բացայայտօրէն դրսից հրահրած ծրագիրը: Անկախ պետականութիւնը լեզուի պահպանութեան եւ մշակոյթի գարգացման լաւագոյն ու թերեւս միակ գրաւականն է, իսկ մենք արդէն շուրջ երկու տասնամեակ պարբերաբար լսում ենք մե՛ր թուական դպրոցները վերաբացելու, մե՛ր թուական վատ՝ ուսուցիչներ երկրորդ պետական լեզու հռչակելու առաջարկներ, հիմա էլ, ինչդեռ, երեւանում բացուելու է Լոմոնոսովի համալսարանի մասնաճիւղը բացառապէս մեր պետպիւտեճի, իսկ աւելի ճիշտ, հայաստանցի հարկատուի ոչ սոսուզ գրպանի հաշուին: Ուսուցումը, ինչպիսի՞ երջանակութիւն, լինելու է ուսուցիչներ, լաւագոյն շրջանաւարտները, ոչ մի կասկած, գնալու են Ռուսաստանի տնտեսութիւնն ու գիտութիւնը գարգացնելու: Տեղի է ունենում երկրի ընդերքի եւ բնութեան գրեթէ թշնամական թալան ու աւերում: Իսկական ազատամարտիկը մատնուած է թշուառութեան, իսկ մշտապէս հարկային ստուերում գործող փողի քսակը յայտնուած է չգիտես ում ձեռքերում: Մեր ժամանակն արտաքուրջ լաւ գրքեր, իհարկէ, գրուած են: Իսկ պակասում

են մեր գրականութեանը, թերեւս, ինչպէս տարիներ առաջ վարդան Գրիգորեանն էր մի հարցազրույցում ասել, մեծ գաղափարները: Լուսահոգի եղբօրս այս միտքը հիմա էլ աւելի արդիական ու հրամայական է հնչում:

**Գ.Թ.** - Դուք յիշատակեցիք «Ոստանի վերջին ճամբորդութիւնը» գիրքը, որտեղ համաճում վիպակից բացի, գետեղուած է նաեւ «Ազատ հայր» վեպը: Երկու ստեղծագործութիւններն էլ շօշափում են մեզ համար շատ ցաւոտ հարց՝ արտագաղթը: Սակայն գիրքն այսօր էլ կարելի է գտնել գրախանութներում: Ինչպե՞ս հասկանալ, արտագաղթը մեր ընթերցողին չի՞ հուզում:

**Վ.Գ.** - Յուզում է: Բայց հիմա ամէն ինչի նման գիրքն էլ գովազդի կարիք ունի, չգովազդուեց՝ մնում է գրախանութներում: Ազգային ժողովի ՀՀ-ական պատգամաւորն էլ յայտարարում է, որ արտագաղթը մեզ պիտի ուրախացնի՝ արտագաղթելով մարդիկ գնում, «գրսերում» փող են աշխատում: Ոչ միայն «Ոստանի վերջին ճամբորդութիւնը», այլեւ աւելի վաղ լոյս տեսած «Առաջնորդի կեանքն ու մահը» սատիրական վէպս այսօր կարելի է գտնել գրախանութներում, այստեղ էլ երեւի իզուր եմ «գովերգել» մեր քաղաքական կուսակցութիւնների «հայրենանուէր» գործունէութիւնը:

**Գ.Թ.** - Տպաւորութիւն կայ, որ 21-րդ դարում իրականութիւնը հակուած է համաշխարհեցման, գազաթնորդ գնալով մուսուլմաններ: Կարծես Պիկասոն, Դալին, Ֆոկլենդը, Սարոյեանը, Շոստակովիչը, Խաչատրեանը կամ միւսները իրենց հետեւից փակել են բարձունք տանող դռները... Երեւոյթը ժամանակաին՞ է, թէ՞...

**Վ.Գ.** - Մի քանի տարի առաջ, երբ պատահաբար նստած էի հեռուստացոյցի առաջ, յանկարծ յայտարարուեց, որ գովազդից յետոյ հեռուստադիտողը կը հանդիպի հայ բեմի լեզուագիտ: Սկսեցի սրտատրոփ սպասել, փորձելով կռահել, թէ ով է այդ լեզուագիտը: Վերջապէս, մտածում էի, վերջապէս մեր մեծերից մէկին յիշել են... Բայց երբ երեւաց «լեզուագիտը»... Չեմ ուզում ո՛չ անունը տալ, ո՛չ էլ մեղադրել այդ «լեզուագիտ», վերջ է վերջոյ նա ինքը չի իրեն «լեզուագիտ» հռչակել, այլ մեր ժամանակը, որին պէտք էին Պիկասոն ու խաչատրեանները, ընդհանրապէս որեւէ լուրջ բան, միայն թեթեւ ժամանց: Երեւոյթը ժամանակաւոր չի այն առումով, որ սա դեռ անցեալ դարի կէսերին մշակուած ծրագրի քայլ առ քայլ իրականացումն է՝ համացանցի երեւան գալով արագացած ու հասանալի: Արուեստի բարձունք տանող դռները չեն փակուել, ուղղակի այդ դռների ճանապարհին մեր ժամանակի անիւր պտտեցնող ձեռքը փռել է գայթակցութիւնների՝ սեքսի, հաճոյքների, փողի, էփան փառքի մարգագետին-ճահիճը, որտեղ խրուելը հեշտ է, դուրս պրծնելը՝ դժուար: Խնդիրն է՝ դատախարակել սպառողների՝ որեւէ այլ բանով ուղեղը չհասարակութիւններ, կառավարուող հասարակութիւններ, հասնել մշակութային առանձնայատկութիւններին, ազգային լեզուների վերացմանը, որին ընդգիմա-

նում են ով ինչպէս կարող է կամ մեզ նման պարզապէս չեն ընդդիմանում:

**Գ.Թ.** - Հաշուած ամիսներ են մնացել Հայոց մեծ եղեռնի 100-ամեակին: Կարելի՞ է ակնկալել, որ Հայկական հարցն ի վերջոյ իր դրական պատասխանը կը գտնի: Երբ մոլորակի վրայ ցեղասպանութիւնների շղթան երկարում է, աշխարհը կը կարողանա՞ թուրքական ժխտողականութեան պատմելը յաղթահարել...

**Վ.Գ.** - Կ'ուզէի սխալուել, բայց չեմ կարծում, թէ յաջողուի: Թուրքիան կը ձեռնարկի ընդամէնը ձեւական քայլեր՝ միջազգային հանրութեան աչքը խոթելու համար, քանզի միջազգային հանրութիւն կոչուածը հենց դա է ակնկալում Թուրքիայից: Յիշենք, թէ ինչպիսի ոգեւորութեամբ ընդունուեց էրդողանի Ապրիլ 23-ի ուղերձը, որտեղ մարդասպանն ու թալանչին պարզապէս ցաւակցում էր իր իսկ ոճրագործութեան գոհերին՝ միեւնոյն ժամանակ համանման քայլ՝ ցաւակցութիւն ակնկալելով Հայաստանից ու հայերից: Ոչ պակաս, եթէ ոչ աւելի կարեւոր է գերտէրութիւնների եւ առաջին հերթին ԱՄՆ-ի շահամոլութիւնը: Ի՞նչ, ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը եւ գրկուել Թուրքիայի հետ քաղաքական ու տնտեսական առեւտրի գործիքի՞ց: Չեմ պնդում, բայց անձամբ իմ համոզմամբ Հայոց ցեղասպանութեան ճանաչմանը, դատաւարմանը եւ հատուցմանը հասնելու միակ ճանապարհն է՝ գերտէրութիւնների եւ առաջին հերթին ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի հասարակական գիտակցութեանը հասցնել, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչումն իրենց կողմից ոչ թէ մարդասիրական քայլ է, այլ սեփական մեղքի ուշացած մասնակցութեամբ հնարաւոր եղաւ 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը՝ դարձեալ նրանց շնորհիւ առ այսօր անպատիժ ու անհատոց մնացած: Այս կապակցութեամբ արժէ յիշել նաեւ Եւրախորհրդարանի 1987թ. մեզ այնքան շոյող, իսկ իրականում երկիմաստ բանաձեւը: Այո՛, Հայոց ցեղասպանութիւնն այնտեղ ճանաչուած է, սակայն յաջորդ իսկ տողով ընդգծուած է, «որ պատմական այդ իրադարձութիւնների որպէս ցեղասպանութիւն ճանաչումը այսօրուայ Թուրքիայի նկատմամբ առիթ է ի կարող հանդիսանալ քաղաքական, իրաւական կամ նիւթական որեւէ պահանջ»: Այսինքն, ինչ-որ արեւ էլ հալալ է քեզ, Թուրքիա, մի ներողութիւն է, մեծ բան չի, ինչդեռ, անցնի գնաց: Եւ սա այն դէպքում, երբ իրենք՝ Թուրքերը, գիտեն, որ Աթաթուրքի ստեղծած հանրապետութեան հիմքում ընկած կապիտալի աւելի քան 60 տոկոսը հայերից թալանուածն էր: Եւ ես կարծում եմ, որ 100-րդ տարելիցի շեմին հենց հատուցման հարցը պէտք է դառնայ մեր պահանջի անկիւնաքարը:

**Գ.Թ.** - Դուք տարուայ կէսը Լիթուանիայում էք, կէսը Հայաստանում, այսինքն՝ մի ոտքով Եւրամիութեան քաղաքացի էք, միւսով՝ ապագայ Մաքսայիմ միութեան: Եւրամիութիւն, թէ՞ Մաքսայիմ միութիւն հարցը ապական մնալ: Հարցը ոչ միայն քաղաքական կամ ստիտեսական է, այլեւ քաղաքակրթական ու մշակութային եւ մի քանի անյայտով խնդիր է յիշեցնում: Պատասխանի Ձեր տարբերակը:

**Վ.Գ.** - Ինձ թւում է՝ ընտրութիւնն արդէն կատարուած է: Այսօրուայ Ռուսաստանը, ԽՍՀՄ-ի նման, Յարական կայսրութեան տարածքներն ու նրա ժողովուրդներին դիտարկում է որպէս պապենական հող ու իր հպատակներ եւ մեզ իր ճիրաններից բաց թողնելու մտադրութիւն չունի, առաւել եւս, որ մեր ներկայ՝ մեծ բիզնեսի հետ սերտաճած ու նրանց կամակատար իշխանութիւնները քաջութիւն չունեն Ռուսաստանին «ոչ» ասելու: Նաեւ չգիտեմ, թէ Մաքսայիմ միութեան կազմում լինելը մեզ որքանով է ապահովագրելու այն բանից, ինչն աւելի քան սպառիչ ձեւակերպեց ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնութեան առաջին դեսպան Ստուպիշինը՝ պաշտօնաթող լինելուց յետոյ: Նա ասաց բառացի հետեւեալը. «Հայաստանը Ռուսաստանի միակ յուսալի դաշնակիցն է Հարաւային Կովկասում, որին Ռուսաստանը վճռական պահերին, ցաւօք, միշտ դաւաճանում է»: Քաղաքակրթական եւ մշակութային հարցերին աւելի դժուար է միանշանակ պատասխան տալ: Դասական արժէքների տեսանկիւնից, իհարկէ, գերադասելի է եւրոպական ուղղուածութիւնը, իսկ գալով նորօրեայ «արժէքներին», թերեւս աւելի լաւ է խօսեմ հենց Լիտթուանի օրինակով, որը շուրջ կէս դար լինելով ԽՍՀՄ-ի կազմում, ի տարբերութիւն Արեւմուտքի, մնացել է բաւականին աւանդապահ: Մանկապարտեզային ընթերցանութեան եւրոպական մի ծրագրով նախատեսուած էր երեխաներին կարգաւ երկու բառով ասած՝ այս բովանդակութեամբ հեքիաթ. արքայադուստրն ու արքայազնը՝ քոյր ու եղբայր, մի օր հիւր գնացին հարեւան դղեակում ապրող արքայազնին ու արքայադուստրը: Արքայազնը սիրեց արքայազնին, արքայադուստրը՝ արքայադուստրը: Սիրող զոյգերն ամուսնացան, եւ հիմա մի դղեակում ապրում են երկու երջանիկ արքայազններ, միւսում՝ երկու երջանիկ արքայադուստրեր: Քանի որ այս հեքիաթի ընթերցումն արգելելը եւրոպական արժէքների ոտնահարում կը լինէր, ծածկադմփոց արեցին, թէ իբր կարգացել, «դասընթացն» աւարտել են, թէեւ շատ մանկապարտեզներում հեքիաթը, իրօք, երեխաներին ընթերցուել էր: Լիթուանի գործող սահմանադրութեամբ ընտանիք է համարուում տղամարդու եւ կնոջ միութիւնը, հիմա նրանից պահանջուած է «տղամարդ» եւ «կին» բառերի փոխարէն ամրագրել՝ «երկու չափահաս մարդկանց» միութիւնը: Լիթուանի առողջապահութեան նախարարը վերջերս առաջարկում էր ընդունել օրէնք, համաձայն որի՝ բժշկական համալսարան աւարտողն առնուազն երկու տարի պարտադիր պիտի աշխատի Լիտթուանիում, քանզի դիպլոմն ստանալուն պէս բոլորը Արեւմուտք են գնում, որտեղ վարձատրութիւնը տասնապատիկ աւելի է: Բայց նախարարի այս առաջարկութիւնը եւրոպական արժէքներից ամենակարեւորի՝ մարդու իրաւունքների լիտի ոտնահարում էր, հետեւաբար եւ դատապարտուած անյաջողութեան, եւ ոչինչ, որ Լիտթուանի շրջաններում բժիշկ չի մնացել: Երկընտրանքը՝ Եւրոպական, թէ՞ Մաքսայիմ միութիւն, մեզ համար այսքան ցաւոտ չէր լինի, եթէ ընտրութիւն կատարելիս առաջնորդէինք մեր ազգային ծրագրի շահերով: Եթէ

# ԱՆՍԱՌ ՓԱՌՔԻ ՆԵՐԲՈՂ ՍՈՒՍԱՆԵՐԻ ԼԵՌԱՆ ԼԱՆՁԻ ՇԵՆԵՐԻ ՔԱՋԵՐԻՆ

**ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ**  
(Շարաւեան Լուսինայի Գրական Կենտրոն)

Տիրգրան Անդրէասեանի խորհուրդով, կանաչք պատրաստել էին երկու վիթխարի սպիտակ դրօշակներ, որոնցից մէկի վրայ սեւ ու խոշոր մեծատառերով գրուած էր՝ «ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ ԴԻԲԱՆՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՆ, ՓՐԿԵՑԷՔ», միւսի վրայ իր քրոջ կողմից ասեղնագործուած խոշոր կարմիր խաչ: Դրօշակները ամրացրել են ծառին, ծովի հորիզոնը դիտելու համար շուրջօրեայ հերթապահութիւն սահմանել: Ծովափին, երկու հմուտ լողորդ լեռնական մարդիկ՝ շուրջօրեայ հերթապահութիւն կատարել, դէպի երեւազոց նաւ լողալու ու նրա հրամանատարին աղերսագիր յանձնելու համար:

«Պաշտպանական խորհուրդի»-ն առաջարկ է եղել մակոյկ պատրաստել, նաւարկել դէպի Կիպրոս կղզի, տեղի Անգլիական կառավարիչին տեղեկացնել լեռան պաշտպանների վիճակի մասին: Ատաղձագործները, արհաւիրքից փրկութիւն փնտռելու նման «Նոյան Տապան» նաւակ են պատրաստել, երկու հոգով նաւարկելու դէպի Կիպրոս, աղերսագրի վեց օրինակներ յանձնելու կղզու կառավարիչին, Անգլիոյ թագաւորին ու արտագին գործերի նախարարին, Պօղոս Նուպար Փաշային եւ նաւարկութեան ընթացքում որեւէ հանդիպած նաւի հրամանատարին: Նաւակը վարելու յանձնառու մարդկանց բացակայութեան պատճառով գործողութիւնը ձախողել էր:

Սեպտեմբերի 5-ի Կիրակի առաւօտ էր, յանուն Քրիստոսի տառապանքի գոհողութեան ու առ Աստուած իրենց փրկութեան աղերսի, բոլոր դաւանանքների սպասաւորներով պատարագ էին մատուցում...: Խնդրելու ի՞նչ, կռուի էին ելել լեռներ, ժամն էր մարտնչելու եւ ոչ թէ աղերսելու...: Երկինքն էր ջիւղ ժպտացել, կապոյտ ցօղէլ անտառախիտ լեռան բարձունքների ծառերի վարսերին: Միջօրէ, արեւն էր իջել լեռան վրայ, փրկութեան աւետիսի շողերի լոյս վառելու հիւղաւանի վրայ:

Յանկարծ, հիւղաւանն է որոտացել՝ «Վախօրը իկէիր-ՇՈՒԵՆԱԻԸ ԵԿԵՐ Է: Ռազմանաւը, որպէս փրկութեան յոյսի-լոյսի հարավառ կանթեղ նաւարկում էր դէպի ծովափ: Նաւաստիները նշմարել էին լեռան բարձունքին փողփողացող դրօշակները, պատասխանել հերթապահողի շարժումներին, աւելի մօտեցել ավին, իմանալու լեռան վրայ պատահածի մասին: Ծովակալ Տարթիթ Տիւ Ֆուրնէ, իր «Պատերազմի լիշատակները» գրքում տեղեկացրել՝ «Սեպտեմբերի առաջին օրերին, Կիւզն յաճանաւի հրամանատար Քափիթէն Պրիստըր ցամաքի բլուրի վրայ նշաններ է տեսել: Ափին մօտեցող յաճանաւը մակոյկ է իջեցրել ծով, դէպի նաւ լողացող լեռնականներին յաճանաւ բարձրացնելու: Ֆրանսերէն իմացող Խաչեր Տումանեան բացատրել է եղելութիւնը: Նաւապետը խօստացել է ու թ օրուայ ընթացքում վերադառնալ, տեղեկացնել հնարաւոր օգնութիւն տրամադրելու միջոցների մասին»:

Պետրոս Տմլագեան, որը նոյնպէս ֆրանսերէն է իմացել, նաւ բարձրացել, տեղի ունեցածի մասին

նաւապետին մանրամասն տեղեկութիւններ յայտնել: Համաձայն նրա ցուցմունքի, յաճանաւը երկու ժամ շարունակ ուժբահարել է լեռան նախաբլուրների վրայ ծուարած թշնամու գորքի դիրքերը, ռազմանիւթի պահեստի վերածուած Քէպուսիէի եկեղեցին եւ թուրք վերաբնակներով լեցուն գիւղը: Ես, մանչ ատեն, շօշափել եմ եկեղեցու որմին միւրճուած ռուժբի կտորը, ուրախութիւնից ցատկել՝ իմանալով, որ այն դուշմանի վրայ ընկած ռուժբից էր: Վառուած էր Քէպուսիէն, սպանուած էին վերաբնակները ու պահեստի գինուորները, ողջ մնացածները սարսափահար փախչում: Առաջին մարտում պարտուած Խաչտը, խրախուսել էր նրանց, որ Գերման մի մարտանաւ էր սխալմամբ ուժբահարել տեղանքը:

Պարտուած թշնամին խորհել է, լեռը պաշարելը անարդիւնաւէտ էր լինելու, ֆրանսացիք ու հայերը կարող էին լեռան ու դաշտային կողմերից արշաւանք կազմակերպել: Դուշմանը նկատի ունենալով այդ, Սեպտեմբերի 7-ին նոր յարձակում է ձեռնարկել: Ճակատամարտը շարունակուել է մինչեւ երեկոյ, թշնամու գորքը բազմաթիւ զոհերով, ոչ թէ նահանջել, այլ փախել է լեռներից ու նրա ստորոտներից: Նորէն լեռնական հայերի յաղթանակ, կռոււած յաղթում էր ոգին, հողի բոյրի արթնած ոգու հուրը: Լեռան վրայ ծաւալուած մարտերի ատեն, Պաշտպանական խորհուրդի՝ «Ի պատուիրակութիւնը ժան Տարք մարտանաւի վրայ տեսակցել է Վից Ամիրալ Տարթիթ Տիւ Ֆուրնէ-ի հետ, որը ազնուաբար ժամանել էր լեռան ստորոտի ծովափ, տեղեկանալու համար լեռնականների կռուների ընթացքի եւ նրանց կացութեան մասին: Քաջալերել է լեռնականներին, մինչեւ նոր կարգադրութիւն շարունակել դիմադրութիւնը:

Սեպտեմբեր 9-ի առաւօտեան, երկու ալաուի մարդկանց տղաներ երեք տարբեր գրութիւններ յանձնել պատնէշները պահպաններին: Որոնցից՝ սօքթոր Բենիամինի նամակները յանձնուել են Տէր Աբրահամին ու Տէր Վարդանին, իսկ հազարապետի նամակը հինգ գիւղերի մուխթարական ժողովներին: Կրկնել էին իրենց սովորական սպառնալիքները ստայօղ խոստումները: Ժողովուրդի հետ խորհրդակցելու պատճառով, խոստացել էին միայն քսան չորս ժամ յետոյ կարող էին պատասխանել:

Առանց պատասխանի սպասելու, թուրքը նոր յարձակում էր նախաձեռնել: Լեռնական հայր պատրաստ էր նոր կռուի, իրենց գէնքերից ու ոգու շանթերից պայթած գնդակները մահ էին սփռել նրանց շարքերին, օրօրուել էին շարքերը, փլուել էին պատնէշները, խառնաշփոթ փախուստի դիմել: Լեռնականների մղած վերջին կռիւը սպանել էր դուշմանի յոխորտանքի ոգին, սպանուել էին Մուսաների Լեռան բարձունքներ ելած դուշմանի շատ գինուորներ ( մինչեւ իսկ հազար գինուոր) ու հեռու անապատներից եկած աւարառու անօրէններ: Յեղիագգի մարդկանց ոգու վրէժն էր իրենց կռիւը, հարիւր հազարաւոր անմեղ մարդկանց, հրեշտակային մանչերի արեան հատուցումն էր, ոչ թէ ներեցին թշնամուն, այլ սպաննեցին, սպաննելու եկած դուշմանին:

Իրենց լեռներից շատ հեռու, դեռ մեծ կռիւ պիտի տային դուշմանին, Եւրոպացի սպաններին ցոյց տային հայոց կռուի ոգու կրակը, որոնց հրամանատարը պիտի ասէր՝ «Երկու հարիւր հազար անգլիացի գինուորի փոխարէն քսան հազար հայ գինուոր տուէ՛ք ինձ, միջին արեւելքը կը նուաճեմ»:

Սեպտեմբերի 10, առաւօտեան արեգակը Աբրահամ լեռան վրայից յուշիկ սահելով այլեւո՞ծ ծովի սպիտակ փրփուրների վրայով, ողջոյնել ֆրանսական Կիւզն ու Տէսեքս ռազմանաւերին, որոնք իրենց թնդանօթների երախներից կրակ էին տեղում Մուէտիոյ գորանոցի, Քէպուսիէ եւ Գապալըզ գիւղերի թշնամու յենակետերին: Լեռների բարձունքներից նրա լանջերին իջած մօտակայ պահակակետերի մարտիկները ուրախ բացականչութիւններով դիտում էին թշնամու գինուորների եւ աւարառու աւազակների տապալիւրը ու ով կարող էր... փախչում էր:

Վառուած էր գորանոցը, վառուած էին թշնամիներով վերաբնակեցուած գիւղերը, կրակի բոցերը կարմիր ժպիտ ցօղում մօտակայ պատնէշների մարտիկների դէմքերին, որոնք իրենց դիրքերից իջնելով՝ ողջերին կենդանու հօտերի նման քշում հեռու-հեռուներ:

Լեռան կռիւը շարունակելու համար մերժել էին պարէն ու գինամթերք տրամադրելու լեռնականների խնդրանքը: Թուրքիայի ավիերին նոր ռազմաճակատ չբացելու համար, ֆրանսական կառավարութիւնը մերժել էր նաեւ ցամաքահանում կատարել:

Երկու օրերի ընթացքում, Լեռնականները՝ իրենց ինչքերով, գրաստներով, անասուններով, «փրկութեան հովիտ» անուանուած տեղանքով ծովեզերք են իջել: Սեպտեմբերի 12-ին, նաւազանքը շատ սիրալիր հոգատարութեամբ, այլեւո՞ծ ծովի այլքների բաշերը ճողջող մակոյկներով լեռնականներին փոխադրել՝ Կիւզն, Տէսեքս, Տէսթիէ, Ամիրալ Շառնէ ռազմանաւեր ու Անգլիական Բէյլըն օդանաւակիր, նոյն օրը նաւարկել դէպի Եգիպտոս: Ռազմանաւեր, որոնք Մուսաների Լեռան ամենաբարձր գագաթին պիտի քարանային, աշխարհին աւետելու հայոց ոգու կոռուի յաղթանակը: Լեռնականները յենուել էին նաւերի բազրիկներին, յաղթանակի լոյսի ոգով հրավառուած ակներով նայել իրենց լեռներին, շէներին, ո՞վ իմանար յետոյ . . . Մինչ Աստուծոյ փառքը գովերգելը, համախումբ լեռնականների գէնքերի համազարկերով փառաբանել էին հայու կռուի ոգին:

Լեռնականները փրկութեանը անմոռանալի նպաստ են բերել ֆրանսական ծովային սպա, բանաստեղծ Վահան Թէքէանի գարմիկ՝ Տիրան Թէքէանը ու Կիւզն ռազմանաւի Քափիթէն Պրիստըր, որոնք նաւարկել էին դէպի ծովափ եւ առաջինը լեռնականների հետ կապ հաստատել: Իր յուշերում Տիրանը պիտի գրէր՝ Երբ վերջին կանաչք, վերջին ծերունիները ու երեխաները նաւ բարձրացան, հայերի քսան պահակախումբերը միաժամանակ թողեցին իրենց լեռնային դիրքերն ու տարբեր կողմերից ծովափ ուղղուեցին: Ես տեսայ, թէ ինչպէս են ամրակազմ ու խիզախ ազատամարտիկները, կրճեքերին լեփլեցուն փամփշտակալներ, փոքր խմբերով յայտնուած կիրճերից: Յանկարծ ձորակներից մէկի խորքում յարսուռն կրակահերթեր հնչեցին, եւ երբ ցանկացայ իմանալ պատճառը ինձ բացատրեցին, որ պատամբներն այդպէս են ողջոյնում իրենց հրամանատարին:

Նոյն ակնթարթին էլ տեսայ նրան, նա առաջանում էր երկզոյն՝ ճերմակ ու կապոյտ դրօշի ուղեկցութեամբ: Մուսա Լեռան քաջամարտիկները ֆրանսիական դրօշի ներքոյ էին կռուել թուրքերի դէմ, որի կարմիր երկզը, անսալով մեր ծովակալի հրահանգին, հանել էին: Հրամանատարը Եսայի Եաղուպեանն էր՝ (Մուսա Լեռան հերոսամարտը միանձնեայ ղեկավար չի ունեցել) իր սառնասրտութեամբ, ներքին արժանապատուութեամբ հիացմունք չարուցող մի անձնաւորութիւն, ում գլխի փաթթոցը, ինչպէս սասունցի հայդուկներին, ծածկում էր ճակատը ու իջնում մինչեւ ուսը, իսկ փամփշտակալներն ուռճացնում էին կուրծքը: Նրա հայեացքը միաժամանակ թախծոտ ու հրայրքոտ էր: Մագալկաւած դէմքերով կտրիճների մի փոքրաթիւ մարտախումբ հետեւում էր նրան, նա դանդաղ առաջանում էր գէնքերի կամարի տակով, որոնք ապստամբները, ճանապարհի ամբողջ երկարութեամբ, խաչաձեւել էին նրա գլխաւերելու: Ես ընդառուջ գնացի Եաղուպեանին, ձեռքը ջերմօրէն սեղմելով շորհաւորեցի յանդուգն դիմադրութեան համար, որից յետոյ փոխանցեցի պետերիս հրամանը: Պէտք էր Մուսա Լեռը թողնել, անմիջապէս նաւ նստել: Հովիտն այժմ անպաշտպան էր, հակառակորդը, եթէ ավին մօտենալու ժամանակ ունենար, շատ հնարաւոր է, որ ուժբահարէր նաւ նստողներին: -Թշնամին հեռու է, -պատասխանեց Եաղուպեանը, - վախկոտ թուրքը ձեր հրետակոծութիւնից յետոյ գետնի տակ է մտել, երեկուայ գրոհը սոսկ ձեւականութիւն էր, այնպէս որ մի՛ մտայնուէք, բայց նկատի ունեցէ՛ք նաեւ, որ մենք չենք կարող ուրախ սրտով լքել մեր սիրելի հայրենիքը: Այս վայրերը դարերով մերն են եղել, այստեղ մենք մինչեւ այժմ, յիսուս օր շարունակ յաղթանակներ մարտեր ենք մղել մեզ գերազանցող թշնամական ուժերի դէմ: Ախ, եթէ թոյլ տայիք շարունակել պայքարը...:

Շնորհիւ ասպետական ֆրանսիայի ազնուագոյն առաքելութեան, յուրեպոյն վախճանից իրենց փրկութիւնն են գտել Մուսաների Լեռան շէների 4200 Արմին-Հայ արիացի արմէններ: Աստուծոյ սիրոյ ու բարութեան լոյսը հոգում Ծովակալ Տարթիթ Տիւ Ֆուրնէն, Սեպտեմբերի 8-ին այցելել Կիպրոս ու Եգիպտոս իմանալու նրանց պատրաստակամութիւնը ապստամբ հայերին իրենց երկրներում ապաստան շնորհելու: Եգիպտոսի կառավարչութիւնը մերժել էր ծովակալի միջնորդութիւնը, իսկ Կիպրոսի գաղութային վարչակազմը նման թոյլտուութիւն ստանալու համար դիմել Լոնտոն: Այլ պատկան մարմիններին յղած հեռագիրները պատասխաններ, ֆրանսական կառավարութիւնից տեղահանման արտօնութիւն եւ ընդհանրապէս նրանց ապաստանի իրաւունք ղեռ չապահոված, ապստամբներին սպառնացող անմիջական վտանգը նկատի ունենալով եւ իր անձնական պատասխանատուութեամբ հրամայել նրանց նաւեր փոխադրել: Ֆրանսական ծագումով ՄԱՐԳ, այդ օրերին աշխարհը կրակով բռնկած մարկանց նման չէր, թէկուզ ինքն էլ գինուորականի համազգեստ կրում: Պատերազմում իրար դաշնակցած ազգեր Տարտանէլի նեղուցի Կալլիփոլի վայրում ծովային փահանումի ճակատամարտ էին վարում, իր գլխաւորած նաւատորմիղով գնացել մասնակցելու Թուրքի կռուին:



### ՎԵՐՔԵՐՍ ՓԱԹԱԹԵՍ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶՈՂՈՎ

#### ՌՈՒՋԱՆ ԱՍԱՏՐԵԱՆ

Գրողները սովորաբար պատերազմ չեն գնում, որովհետև մարդ սպանելը նրանց գաղափարական հրամայականների մէջ չի մտնում: Եթէ գրչի փոխարէն նա գէշ է վերցնում, նշանակում է՝ մարդկութեան խիղճը մեռել է, նշանակում է՝ ազգը կորստեան վտանգի առաջ է: Իսկ մեր ազգը 1988 թ. Սումգայիթեան եղեռնագործութիւնից յետոյ իսկապէս կանգնած էր դարավերջի նոր ճակատագրական փորձութիւնների առաջ, չհաւատալով այն ամէնին, ինչ կրչուում էր պատմութեան անիւ:

Անեղանքի ելքը այն ոգեկորով տղաների ձեռքում էր, որոնք այսօր պատ են կազմել Երասխուրում, եւ ողջ մնացած ու իրենց հարստութիւնը՝ միայն թշնամու դէմ տարած յաղթանակը համարող կամուրակները, որոնք դէմ են առել մեր իրականութեան պատին ու -մնացել շուրճած- Տաւուշի տարածաշրջանի առաջին ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպիչ ու հրամանատար, բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ ու ռեժիսոր Սամուէլ Բեգլարեանը, ով այսօր արդէն արցախեան պատերազմի վետերան է, նախկինի նման տագնապում է անաւարտ պատերազմի տեղատարափ գնդակներից մարդի պէս քրքրուած Չինարի, Վազաշէն, Մովսէս գիւղերի բնակչութեան անվտանգութեան համար:

Սահմանները պահող այսօրուայ տղաները դեռ չէին ծնուել, երբ Սամուէլը գէնքը ձեռքն առաւ ու սարերն ելաւ՝ թշնամու դէմ: Ու սիրտը շատ է ցաւում, եթէ նրանցից մէկը յանկարծ թշնամու դի-

պուկահարի գոհն է դառնում. «Ով էր, որ մարեց աչքը երկնքին, Արիւնը տուեց այս երկրի վերքին...» կարծես ինքն իր հետ է խօսում նա ու աւելացնում՝ Վերքերս փաթաթեմ Հայաստանի հողով, որպէսզի ծիծաղի կարօտ գինուորի աչքերին գոնէ ժպիտ երեւայ...

Պատերազմի երրորդ տասնամեակն է, սահմանամերձ գիւղերում փոքրիկ վախով է մանկապարտէզ գնում, դպրոցների պատերն ու ապակիները գնդակների խոռոչներով են պատած, հնձուրը արտում կարող է մնալ, որովհետև թուրք ենիչերիները տեղի, անտեղի կրակում են: Կոնֆուցիուսը ասել է՝ այնտեղ, որտեղ մեզ կոտորում են, մենք աւելի ենք հզօրանում այդ տեղում:

Գիւղերի բնակիչներն արդէն 20 տարուց աւելի «իմունիտետ» ունեն արձակուրդ գնդակների նկատմամբ, իսկական հերոսներ են, եւ գրողը, նրանց երբեք չլքելով, ինչպէս որ կան, վերցնում ու տեղադրում է իր պատմութեան քննարկը էջերում, ուրիշ էլ ով, եթէ ոչ՝ երկիր պահող, ազգ պահող, այդ հողի վրայ գաւակ ծնող ազնիւ ու աշխատասէր մարդիկ: Հենց սա է յատկանշականը Սամուէլ Բեգլարեանի ստեղծագործութիւններում՝ իրական մարդն իր իրական կեանքով՝ իր մոլորութիւններով, անկեղծ ու անապական սիրով, գեղջկական միամտութիւններով ու աշխատանքի հանդէպ ունեցած պատասխանատուութեամբ:

Սամուէլ Բեգլարեանը սիրահարուած է ոչ միայն իր երկրի հողին, նաեւ՝ նրա աւանդութիւններին: Նրա կին հերոսուհիները, իր իսկ բառերով ասած, առեղծուա-

ծային են, հիպնոսական, հրաւիրող ու անմատչելի: Տղամարդիկ սիրոյ հպատակներ են, ծեր կաղնու ծառի տակ նստած ծերերը՝ իրենց անաւարտ երազների մասին յայտնի յօրինողներ: Աստուած, Տէր ողորմեայի թագբեհի վրայ շառք քիչ քաշի-մէկ տողանոց այս մտքի փիլիսոփայութիւնը անցեալի ու ներկայի միախառնուած ընթացքն է՝ ներկայ բարքերի դէմ լուռ բողոք, արդարութեան աղերս: Վերջերս լոյս տեսած բանաստեղծութիւնների ժողովածուն նա վերնագրել է «Կեանքը անտառ է մի հին»:

Արձակի մէջ համբերատար ու զգուշաւոր է նա, իսկ չափածոյի դէպքում կտրուկ ու անսեթեւեթ: Բառը Բեգլարեանի մօտ ծիւր է արձակում ու դառնում ձայն, տերեւ՝ անտառի արցունք, հառաչանք՝ տապալուող կաղնի, հօր յուշերը՝ օրհնանք ու հաց, տերեւաձիւնից ճկած ծառը՝ մրսած բառի պատկեր, աստղի արցունքը՝ լոյս- Ընդերքում հրաբուխ կայ եւ այն պիտի ժայթքի, որովհետև հանգած հրաբուխների պակաս չունենք: Ինձ թուում է՝ հեղինակը իր արձակին աւելի է վստահում, քան պոէզիային: Ոսելով ինքն իր հետ, խոստովանում է. «Թող պատմութեան քննարկը հզօր, թեւաւոր լինեն, հօ ճտերս անտէր չեմ թողնելու գնամ, սրտիցս են պոկուել»:

Գրքերը իւրաքանչիւր գրողի համար իր գաւակներն են, ինն ամսում կը ծնուեն նրանք թէ երկու, միեւնոյն է, գրողը փայտաշու է նրանց՝ մի օր հասարակութեան հոգեւոր լուսատու տեսնելու յոյսով, թէ որքանով է այն իրականութիւն դառնում, դա այլ ինչի է: Սամուէլ Բեգլարեանի արձակը հետաքրքիր շղարձակումներ ունի: Այն պատմութեան քննարկը,

որոնք անցան աչքիս շոյանքով, վարպետ գրչի ձեռագրեր էին: Անցեալն ու ներկան մեր հայրերի կենդանի յիշողութեան մէջ է, նրանցից յորդացող բարութեան մէջ: Նրանք գիւղաբոյր են ու գիւղաշաղախ, սիրոյ հրաշապատումների անսպասելի ակնկալիքներով լի, որքան հասարակ, նոյնքան անմատչելի ու գերող, եւ այդ մարդկանց մասին խօսող էջերը աւարտում են մէկ շնչով՝ հերոսների ճակատագրերի ետեւից արագ հասնելու համար:

«Սոնան», «Հայ կին», «Ճերմակ վարդեր», «Իմ սիրոյ հաճաքներն» եւ այլ պատմութեան քննարկները կտրուկ ու անսպասելի վերջաբանով ինձ յիշեցրին բակունցեան գողորիկ նովեյները, որոնք շարունակում են մտքումդ ու վերջ չունեն: Հեռաւոր լեռների գրկում, գմբուխ կանաչի ծեփծեփումների ու թշնամու գնդակների տակ մարդկանց ճակատագրերը նա խնամքով թաքցնում է իր սրտի «դաւթաբուրում», որպէսզի նրանք չկորչեն հին անտառի նոր ու գերխիտ խոտերի մէջ:

Բեգլարեանի պատմութեան քննարկը իւրաքանչիւրը առանձին վերլուծութիւն ու լուրջ խնամք է պահանջում: Նրա գործերում չհամաձայնուելու շերտեր էլ կան, սակայն դա գրողի ոճն է, ասենք՝ գլխաւոր հերոսներին մահուան տանելու աւարտը, ինչպէս Թումանեանի մօտ: Նոր սերնդին մենք պէտք է ազատագրենք գոհի հոգեբանութիւնից նրանց դէպի կեանք ու հերոսականութիւն տանելու նպատակով: Ժամանակն է հայի աչքերից մաքրելու այդ հեզ տխրութիւնը: Ես ուզում եմ, որ Բեգլարեանի հոգու աչքերում, ինչպէս ինքն է ասում՝ «արցունքները երբեք ծուխ չդառնան»...

### ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-ԷՆ ԵՏՔ

#### Շարունակուած էջ 6-էն

մնացին: Ո՞վ կրնայ վիճարկել, թէ անոնց բացակայութիւնը տակաւին ինքզինք զգացնել չի տար Հայաստանի ամէն քայլափոխին, հայ կեանքին ընդհանրապէս, Հայաստանի ներքին զարգացումներուն յատկապէս:

1999 Հոկտեմբեր 27-ին Հայաստանի Ազգային Ժողովին մէջ պատահած աննախադէպ բարբարոսութիւնը, իր հասցարհուր տգեղութեամբ, գլեց անցաւ մեր երեւակայութեան բոլոր սահմանները: Մեր օրերու անկիւնադարձն էր ան: Երկիրը կրնար խրիլ անորոշութեան եւ անգլուխութեան տիղմին մէջ: Մեր թշնամիներուն չկատարածը, անոնց սրտագին փափաքը, ի կատար ածեցին հայութեան մէջէն բուսած ստորին արարածներ, եւ ինչքան «հերոսական» ոգիով, անպատկառութեամբ եւ լիտիութեան վատագի դրսեւորումներով:

Սակայն, ի պատիւ մեր ժողովուրդին սթափութեան եւ զգաստութեան, հայրենիքը գերծմնաց նոր արիւնահեղութեան:

Ան կրցաւ յաղթահարել անսպասելի այդ ճգնաժամը. երկիրը, իրօք, փրկուեցաւ ցնցիչ իրադարձութենէ եւ դէպի խորխորատ գայթակմէ. առաջնորդները վատաբար անճիտութեամբ էին եւ կը մնար մէկ ճանապարհ՝

զսպուածութեան, պահի լրջութեան եւ խոհեմութեան:

Հոկտեմբեր 27-էն ետք սիրտերը մնացին վիճարկող, նահատակներուն ինկելի յիշատակը՝ անթաւամբ. քաղաքական դաշտը՝ բաց. գոյացաւ զգալի պարապութիւն մը հեղինակութեանց եւ լրջախոհ լիտըրներու: Եւ ահա հրապարակը խճողեցին զանազան ճղճիմներ ու զարմանազան լրջճղճիներ, դրամի ու պաշտօնի պատեհապաշտ սմսեղուկներ. միջակութիւններ եւ երերուն նկարագրի տէր միմոսներ: Ինչ անհանդուրժելի մթնոլորտ է, երբ մեծերու չգոյութեան բեմահարթակ կը սողոսկին գունափոխ եւ դիմափոխ լարախաղաղացներ եւ այս երեւոյթը, ցաւ ի սիրտ, կը նշմարուի ամէնուրեք:

Սակայն, ի՞նչ կը նկատուի Հոկտեմբեր 27-էն ետք, ո՞ւր է մեծագոյն խոցելիութիւնը

Հոկտեմբեր 27-էն ետք ստեղծուած տհաճ իրավիճակին:

Պատասխանը կասկած չունի. ի հարկէ՝ անպատեհութեան լիտի զգացումը:

Արդարեւ, Հոկտեմբեր 27-էն ետք բազմաթիւ դէպքեր եկան ապացուցելու, որ անպատեհութիւններ վարակիչ ախտ է հայրենական կեանքին մէջ: Պաշտօնի եւ դրամագլուխի տիրող համար ամէն ոճիր եւ ապաբարոյ արարք կը մնայ անպատիւ:

Դրամով ամէն յանցագործութիւն կարելի է կոծկել. մի գուցէ անմեղներ դառնան մեղաւոր...: Եւ այս գարշահոտ մթնոլորտը երկրի բարձրագոյն ղեկավարէն մինչեւ հասարակից օլիկարխը:

2001-ին «Առազաստ» սրճարանին մէջ ծեծի տակ սպանուեցաւ Պօղոս Պօղոսեանը Հայաստանի նախագահին (Ռ. Քոչարեան) թիկնապահներուն կողմէ, նախագահին աչքերուն դիմաց եւ յանցագործները մնացին անպատիւ...: 2008-ի Մարտ 1-ին հաւաքներու ընթացքին զոհուեցան տաս հայորդիներ եւ տակաւին պատասխանատուները կը մնան անյայտ: 2012-ին «Հարսնաքար» ճաշարանին առջեւ ծեծի տակ իր գաւակները որբ թողուց բժիշկ Վահէ Աւետեանը, մինչ ոճրագործներուն հովանաւորը կը շրջագայի հոս ու հոն ամենայն սառնասրտութեամբ: Եւ այս շարքը երկար է ցաւալիւրօքն: Իսկ վերջին խայտառակութիւնը Սիւնիքի տիրահաշակ մարզպետը, որ

հայրենի մամուլին կողմէ բնորոշուած է «ենիչերի», իր լկաղուած արարքներով եւ յանցանքներով հանրածանօթ, դարձեալ կը նշանակուի նոյն պաշտօնին՝ ափ ի բերան ձգելով արգարամիտ եւ հասարակ ժողովուրդը: Հոկտեմբեր 27-ի տրամաբանութեան շարունակութիւնը չէ՞ այս ամենաթողութեան, անպատեհութեան եւ սանձարձակութեան ախտավարակ երեւոյթը:

Հոկտեմբեր 27-էն ետք նշեալ ապառող պայմանները հասարակութեան մէջ ծնունդ տուին «օրէնքով գողեր»ու, թաղային հեղինակութեանց, խառօշի տղաներու վիթխարի զանգուածի մը, որոնք իրենք գիրենք կը նկատեն վեր օրէնքէն, գերիվեր հայրենիքէն եւ աւելի հզօր երկրին սահմանադրութենէն ու քաղաքացիական պարտաւորութիւններէն: 1999 Հոկտեմբեր 27-ին ինկան մեծերը. մինչ 1999 Հոկտեմբեր 27-էն ետք սուսկի նման բուսան հասարակութեան տղուկները եւ ազգին թզուկները:

833 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian  
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian  
Chiropractor

Միտմանապէս եւ սնունդով Քայրփոքրից բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի հետեանքով պատահած վնասումներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

### ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՔԻԹԻ ԱՐԻԻՆԱՐՈՍՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Հարուած ստացողը պէտք է նստեցնել խոնարհելով իրանը քիչ մը առջեւ: Քիթի ոսկորներու կամ քիթի միջնապատի կոտորուածքի նշաններու բացակայութեան պարագային կարելի է փորձել կանգնեցնել արևնահոսութիւնը՝ 3-5 վայրկեան թեթեւ սեղմելով քիթի կողմնային հատուածները դէպի միջնապատ: Այդ միջոցին պէտք է սուժածէն խնդրել, որ շնչէ բերանով եւ թեթեւօրէն դէպի առջեւ խոնարհէ գլուխը:

Աւելի ազդեցիկ եղանակ է քիթի խոռոչի թամփոնաւորումը ջրածինի 3%-անոց զերօքսիտով կամ պարզապէս պաղ ջուրով թրջուած բամպակեայ վիրախճուծով: Արևնահոսող քիթի խոռոչ կը մտցուի վիրախճուծը եւ անիկ կը սեղմուի մասներով: Քիթին մէջ կարելի է դնել սառէ

պարկ կամ պաղ ջուրով թրջուած կտոր՝ գաջն այդ վիճակին մէջ պահելով 10-20 վայրկեան: Պէտք է համոզուիլ, որ արևնահոսութիւնը չի շարունակուիր դէպի քիթ-կոկորդային հատուած. անոր համար պէտք է գննել հիւանդին բերանի խոռոչը կամ խնդրել հիւանդէն քանի մը անգամ թքել՝ համոզուելու համար, որ թուքը չունի արեան գոյն: Վիրախճուծը զգուշօրէն կը հանուի՝ գաջն նախապէս թրջելով պաղ ջուրով:

Պէտք է սուժածը պառկեցնել հորիզոնական դիրքով կամ ուժեղ ետ տանիլ անոր գլուխը, քանի որ արևնը հոսելով բերանի խոռոչին մէջ կրնայ փսխում յառաջացնել: Եթէ, անկախ բոլոր ջանքերուն արևնը կը շարունակէ շատ հոսիլ, ուրեմն պէտք է կանչել շտապ օգնութիւն:

### ԱՇՆԱՆ ՆՈՐԱՁԵՒԹԻՒՆԸ

2014-ի Աշնան նորաձեւութեան մէջ մեծ տեղ կը գրաւեն յատկապէս ծաղկաւոր հագուստները, պատրաստուած հարուստ եւ որակաւոր՝ ծաղիկներու, վարդերու եւ կակաչներու նկարներով կամ կերպաներով:

Ծաղիկները, հինէն ի վեր, ըլլալով սիրոյ եւ զեղեցիկութեան «սիմպոլ», միշտ ալ կը մնան աչքառու եւ սիրուած:

Ծննդեան եւ տօնական օրերու հիմնական եւ տիրապետող գոյնը, ինչպէս միշտ, կարմիրը նկատի ունենալով հանդերձ, մուշ կանաչի երանգները նաեւ նորաձեւութեան ցանկին մաս կը կազմեն այս ձմեռ, ինչպէս նաեւ Մուշ կարմիրը, մանիշակագոյնը եւ «թիւրքուազ»ը:

### ՎԱՅԱԳՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Շարունակուած էջ 15-էն

ունենայինք ազգային գաղափարախօսութիւն: Մի բան, որ երբեք չենք ունեցել: Ազգային գաղափարախօսութիւն ունենալ, ասել է թէ՛ ունենալ նպատակ: Սերնդէ սերունդ, դարէ դար անցնող նպատակ... Եւ որին գուցէ հասած լինէինք, եթէ ունենայինք ծրագիր, գաղափարախօսութիւն... Ինչեւէ, մենք կարծես շատ հեռացանք զրական խնդիրներէ...

Գ.Թ. - Վերադառնա՞նք առաջին հարցի Ձեր պատասխանին: Ուրախալի է, որ նոր վէպ էք գրում, բայց ինչո՞ւ «Պօղոս-Պետրոս» եւ ինչո՞ւ «Բազմաշարչար»:

Վ.Գ. - Չաւարտուած վէպից խօսելը ձուկը ջրում առեւտուր անելու պէս բան է, այնուհանդերձ, ասեմ: «Բազմաշարչար», որովհետեւ մտալիցացումը ծնուեց անկախութեան առաջին տարիներին, այն ժամանակ էլ արուեստը իրականացնելու առաջին փորձը: Բայց ի տարբերութիւն խորհրդային լճացած տարիներին, նոր կեանքն այնքան բազմաշերտ էր, իւրաքանչիւր օրն այնքան հագեցած, թուացեալ յայտնին այնպիսի անյայտ կողմերով էր բացայայտուում, որ իրականացումը, իհարկէ, մեծ ընդմիջումներով, ձգուեց շուրջ քսան տարի: Միայն վերջերս՝ անկախութեան աւելի քան երկու տասնամեակից յետոյ ինձ թուաց, որ արդէն կարող եմ աւարտել սկսածը: Կարճ ասած, ես այս գրքով փորձում եմ վերլուծել, հասկանալ, հնարաւորինս բացայայտել մեր հասարակական-քաղաքական մտքի ու կեցութեան զարգացումները վերջին երկու հարիւր տարում, սկսած այն օրից, երբ «ուսի ոտը դիպաի մեր հողին»: Փորձում եմ հասկանալ, արդե՞ս պէտք է հաւատալ Ներսէս Աշտարակեցուն, կամ արդե՞ս նա ինքն իրեն հաւատում էր, երբ շուրջ երկու հարիւր տարի առաջ շրջաբերականով դիմում էր հայ

ժողովրդին. «Յայտնի է ձեզ Ռուսիոյ օգոստապառ պետութեան նպատակը: Նա իր հզօր բազուկը տարածում է մեր հայրենիքի վրայ ոչ այնքան իր սեփական օգտի, որքան մեր անդորրութեան ու բարօրութեան համար»: Այսքանով սահմանափակուեմ, քանզի փաստօրէն վերադառնում եմ նախորդ հարցին՝ ազգային ծրագրի ու գաղափարախօսութեան չգոյութեանը, եթէ, իհարկէ, քծնանք օտարին, պատեհապաշտութիւնը, յարմարողականութիւնը գաղափարախօսութիւն ու ծրագիր չհամարենք: Մնացածը՝ վէպով, երբ աւարտուած կը լինի: Մի խօսքով՝ «Պօղոս-Պետրոս», բնաբանն էլ՝ «- Պօղոս, գտա՞ր: - Չէ: - Պետրոս, գտա՞ր: - Չէ»:

Գ.Թ. - Կարելի է կռահել, որ վէպը բաւականին սուր, քննադատական է լինելու, իսկ ապագայի կտրուածքով գուցէ նաեւ յոռետեսակա՞ն:

Վ.Գ. - Երբ մեր պետականութեան եւ ազգային ապագայի հարցն է դրուած, յոռետեսութիւնն անթոյլատրելի է: Իհարկէ, շատ բան մեր պետական-իշխանական համակարգում թերի է, բայց ես ապագան տեսնում եմ յանձին այն տաքսու վարորդի, որին հանդիպեցի վերջերս: Նախկին ազատամարտիկի՝ Արաբոյի ջոկատում կռուած, բազմիցս վերաւորուած, բարձրագոյն կրթութեամբ մի երիտասարդի, որն իր ընտանիքը պահելու համար այժմ վարորդութիւն էր անում, բայց որը կարող էր հայերէն խօսքի, կիրթ վարվելաձեւի ու գիտակցուած հայրենասիրութեան դասեր տալ շատ շատերին: Տպաւորուել են նրա յատկապէս վերջին, հրաժեշտի խօսքերը. «Ոչինչ չի կարող ինձ ստիպել, որ ես լքեմ այս երկիրը, ոչ մի բան, սա իմ երկիրն է, ես մինչեւ վերջին շունչս էլ մնալու եմ այստեղ ու պայքարելու, որ իմ երկիրը երկիր դառնայ»:

### ԵՐՋԱՆԻԿ ԶՈՅԳԵՐԸ ԻՆՉՈ՞Ւ ԱՌԱՆՁԻՆ ԿԸ ՔՆԱՆԱՆ

Երեւակայութեան մէջ կառուցելով երջանիկ ամուսնական կեանքը, մենք, իբրեւ կանոն, կը պատկերացնենք, որ կը քնանանք եւ կ'արթնանք սիրելիին հետ գիրկընդխառնուած (հազիւ թէ ներդաշնակ միութիւնը ենթադրէ պահարան՝ երկու մահճակալներու միջեւ): Այսուհանդերձ, գիտնականները կը շտապեն յորդորել մեզ փոխելու մեր համոզումները, եթէ կը փափաքինք, որ մեր յարաբերութիւնները երկարատեւ ըլլան, ստիպուած ենք առանձին քննալ:

Բրիտանացի փորձագէտներու հետազոտութիւններուն համաձայն՝ տարբեր սենեակներու մէջ անցուցած գիշերը բարենպաստօրէն կ'անդրադառնայ զոյգերու յարաբերութիւններուն վրայ, կը նպաստէ աշխատունակութեան բարձրացման:

Մասնագէտները նաեւ կը կարծեն, որ եթէ զուգընկերները սեռային ցանկութեան նուազում կը զգան, ուրեմն կ'արժէ, որ անոնք միառժամանակ առանձին քննան, որպէսզի

կիրքերուն վերադարձնեն նախկին ուժգնութիւնը:

Նշուած կապը հոգեբանները նախեւառաջ կը բացատրեն անով, որ մեզմէ իւրաքանչիւրը ունի անձնական տարածութեան կարիք, որ նուազագոյնը կը կազմէ 80 սմ.: Անիկա զբաղիօրէն կը փոքրանայ, եթէ ձեզի հետ կը քնանայ ձեր տղամարդը:

Երկրորդ՝ շատ գոյգեր կը գտնուին այնպիսի խնդրի առջեւ, ինչպէս խոռալն է: Զուգընկերները լաւ չեն քնանար, կը մեծնայ զրգուածութիւնը:

Խնդրի երրորդ կողմը զեղեցկագիտական է՝ արթնայիլ անմիջապէս յետոյ մեզմէ քիչերուն տեսքը կ'ըլլայ կատարեալ, ատոր համար անհրաժեշտ է քանի մը վայրկեան, որպէսզի մենք մեզ կարգի բերենք:

Այսպիսով՝ միջոց, որ առանձին կը քնանան միայն այն զոյգերը, որոնց մօտ ճգնաժամ է, վերջնականապէս հերքուած է:

### ՍԱՌԱՐԱՆԻ ՄԷՋ ԻՆՉՊԵՍ ՊԱՅԵԼ ԹԱՐՍ ԿԱՆԱՉԵՂԵՆԸ

Թարմ կանաչեղէնը աւելի անուշաբույր կը դարձնէ իւրաքանչիւր ճաշ: Շատերը կանաչեղէն կ'աճեցնեն տնամերձ հողամասերու մէջ, միւսները՝ պատուհանին տակ: Սակայն բոլորին կը մտահոգէ մէկ հարց՝ ինչպէս պէտք է սառնարանի մէջ պահել թարմ կանաչեղէնը, որպէսզի անիկա չկորսնցնէ իր համ ու հոտը:

Հաւանաբար անհատաւոր է, բայց կանաչեղէնը կարելի է քանի մը շաբաթ պահել սառնարանի մէջ՝ իմանալով մէկ խորամանկ գաղտնիք:

Անհրաժեշտ է վերցնել որեւէ կանաչեղէն, անուղի փաթեթ,

սովորական թուղթ եւ ջուր:

Առաջին հերթին թարմ կանաչեղէնը թուղթի մէջ փաթեթել այնպէս, որ անիկա ամբողջովին ծածկուի. թուղթը պէտք է խնայել: Այնուհետեւ, փաթեթը թրջել պաղ ջուրով, եւ ձգել, որ քամուի:

Քամուելէ ետք պէտք է արդէն թաց կանաչեղէնով եւ թուղթով փաթեթել դնել սնունդի տոպրակի մէջ, ուժեղ փաթեթել ու ամուր փակել: Կանաչեղէնը արդէն կարելի է դնել սառնարանի մէջ եւ ձգել երեքէն չորս շաբաթ: Պէտք է միայն հետեւիլ, որ թուղթը մշտապէս խոնավ ըլլայ:

UNITED STATES POSTAL SERVICE® (All Periodicals Publications Except Requester Publications)					
1. Publication Title		2. Publication Number		3. Filing Date	
NASSIS WEEKLY		0 6 6 6 7 - 3 3 0		10-15-14	
4. Issue Frequency		5. Number of Issues Published Annually		6. Annual Subscription Price	
WEEKLY, except two weeks in August		50		\$50	
7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®)				Contact Person	
1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104				Telephone (include area code) (626) 797-7680	
8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer)					
1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104					
9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not leave blank)					
Publisher (name and complete mailing address) SDSP 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104					
Editor (name and complete mailing address) DR. ARSHAG KAZANTJIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104					
Managing Editor (name and complete mailing address) VAHE ACHADJANTIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104					
a. Total Number of Copies (Net press run)		3,500		3,500	
b. Paid Circulation (By Mail and Outside the Mail)	(1) Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above retail rate, advertiser's proof copies, and exchange copies)	123		123	
	(2) Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above retail rate, advertiser's proof copies, and exchange copies)	383		383	
	(3) Paid Distribution Outside the Mail Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS®	2,400		2,400	
	(4) Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®)	66		66	
c. Total Paid Distribution (Sum of 15b (1), (2), (3), and (4))		2,972		2,972	
e. Free or Nominal Rate Distribution (By Mail and Outside the Mail)	(1) Free or Nominal Rate Outside-County Copies Included on PS Form 3541	40		40	
	(2) Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541	35		35	
	(3) Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail)				
	(4) Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means)	300		300	
d. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15e (1), (2), (3), and (4))		375		375	
f. Total Distribution (Sum of 15c and 15d)		3,347		3,347	
g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page #3))		153		153	
h. Total (Sum of 15f and g)		3,500		3,500	
i. Percent Paid (15c divided by 15f times 100)		88.7%		88.7%	
16. Publication of Statement of Ownership					
<input type="checkbox"/> If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the _____ issue of this publication.					
<input type="checkbox"/> Publication not required.					

### ՅՈՎԱՄԷՓ ԱՍԱՏՐԵԱՆ (Մահուան քառասունօրին առթիւ)

Ծնած է 1925 թուականին Իսկէնտերուն: (մարզական Հանրապետարան) մէջ ներկայացուած է որպէս հայ անուանի մարզիկ եւ մարզական գործիչ:

1944ին աւարտած է Կիպրոսի Մելգոնեան վարժարանը, ապա Պէյրութի Ամերիկեան համալսարանը: Զբաղուած է ֆուտպոլով, հանդէս եկած է վերոյիշեալ համալսարանի ֆուտպոլի խումբին մէջ: Մարզած է Պէյրութի «Բագրամեան» ֆուտպոլի խումբը: 1946ին ներգաղթած է Հայաստան:

1946-1955 թուականներուն երեւանի «Տինամօ» («Սպարտակ») թիմին մէջ ըլլալով հանդէս եկած է Խորհրդային Միութեան առաջնութեան մրցումներուն մէջ: Արժանացած է Խորհրդային Միութեան «Սբորի վարպետ» տիտին (1954):

1949-1960 Յ. Ասատրեան հեռակալ ուսուցմամբ աւարտած է երեւանի Պետական համալսարանի Վ. Բրիւսովի անուան օտար լեզուներու մանկավարժական ուսումնարանի անգլիական բաժինը, ինչպէս նաեւ մարմնամարզութեան հայկական ինստիտուտը:

1956-1966ին մարզած է երեւանի «Սպարտակ», «Նայիրի» եւ Հոկտեմբերեան քաղաքի «Սեւան» ֆուտպոլի խումբերը:

1968-1970 որպէս ֆուտպոլի մարզիչ աշխատած է Սուրիոյ եւ Լիբանանի մէջ մարզելով տեղւոյն Հ.Մ.Մ.-ի խումբերը:



1970-1974 գործած է Հայաստանի Հանրապետութեան մարմնամարզութեան պետական կոմիտէին ներս, որպէս ֆուտպոլի պետական մարզիչ:

1977-1982 դասաւանդած է Գապուլի (Աֆղանիստան) Մարմնամարզութեան ինստիտուտին մէջ: 1983-1989 աշխատած է Հայաստանի սբորի պետական կոմիտէին մէջ որպէս ֆիզիքական դաստիարակութեան վարչութեան պետ: Արժանացած է բազմաթիւ պատուոյ գիրերու: Յ. Ասատրեանին շնորհուած է Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր մարզիչի կոչում:

1989էն ի վեր կը բնակէր Լոս Անճելոսի մէջ:

### ԱՆՍԱՌ ՓԱՌՔԻ ՆԵՐՔՈՂ

Ծարունակուած էջ 16-էն

Նրան փոխարինող նշանակուած ուրիշ մի ազնուագարմ ֆրանսացի Բոնիս-Ամիրալ Տարրիէօյի ու Եգիպտոսի ֆրանսական դեսպան՝ Տէֆրանի Չանքերով թոյլատրել են Մուսա Լեւոն շէնքի ապստամբներին Եգիպտոսի Փորթ-Սայիտ նաւահանգիստ իջեւանել: Երկու օրերի նաւարկութիւնից յետոյ՝ Սեպտեմբերի 14-ից մինչեւ Սեպտեմբերի 16-ը, 4200 Մուսա Լեւոն լեւոնականներին բնակեցրել Սուէզի Ջրանցքի արեւելեան ափի Լազարէտո քարանձիհային աւան, պատսպարուել ՀԲԸՄ-ի տրամադրած 500 վրաններում: Անգլիական իշխանութիւնները ուստելիքով ու բժշկական ինստիտուտով ապահովել են նորաբնակներին, Եգիպտոսի կառավարութիւնը պահանջուող մարդասիրական օգնութիւն ցուցաբերել: Եգիպտոսի գաղութի առաջնորդները, «Կարմիր խաչը», ՀԲԸՄը, այլ ընկերութիւններ եւ գաղութի հայ համայնքը ջերմ գուրգուրանքով շրջապատել յաղթական մարտից վահանները կուրծքերին կուռից եկած լեւոնականներին: Իսկ եթէ նաւեր չերեւային... ընթերցող, իմացի՛ր, թշնամու երեք հազար գորքի ու չորս հազար աւարառուներ իջնալու աւելի յաղթական ճակատամարտեր մղած լեւոնականները, կարմիր խաչով դրօշակը քամուն պարզած կ'իջնէին իրենց լեւոնքի բարձունքներին, իրենց արմենական արիւնը որպէս հրաշէկ լաւաչ կը յորդէին խաչտանուով միտիւրի Սուէտիեէ աւանի վրայ...:

Գիշերներին իրենց վրաններին նայող լիաբուսի անուշ դէմքին էին նայում տեսնելու իրենց շէնքերին, լեւոնքին: Նորէն կուռի ելան դուշմանի դէմ, քանդեցին մի հեռու

լեւոն նոյն դուշմանի դիրքերի պատնէշները, գերավարեցին հազարների, դէպի հիւսիս ճանապարհ բացեցին դաշնակից բանակների երթին, իրենք էլ նրանց հետ Հայրենի երկրի չքնաղ Կիլիկեան ազատագրեցին: Դրժեցին իրենց փոքր դաշնակիցին տուած խոստումը... դժուար է վերջը շարունակել, ցաւում է հոգիս, չէ, չեմ շարունակում: Կուռից եկած անուշ Պողոս պապս, հայեացքը յաւած հեռուններ, հոգին աւանդել Լազարէտո աւան, դին ամփոփել են աւագուտներում: Նրա փոշիացած ոսկորների հատիկները ջրանցքի ափին լոյս վառել, անցնող նաւերի երթի ընթացքը լուսաւորել...:

- Վերապրողների մասին ձգբրիտ վիճակագրութիւն է կատարուել՝
- 1408 կանայք
- 915 տղամարդի
- 702 տղաներ
- 539 աղջիկներ
- 639 երեխաներ
- Ընդամենը՝ 4200 հոգի
- Վերապրող ապստամբների ծագումը ըստ բնակավայրերի՝
- 80 ընտանիք Վազըֆ գիւղից
- 10 ընտանիք Քէպուսիէ գիւղից
- 160 ընտանիք Խտրպէկ գիւղից
- 228 ընտանիք Եօղունօլու գիւղից
- 20 ընտանիք Հաճի Հապապլի գիւղից
- 70 ընտանիք Պիթիաս գիւղից
- Ընդամենը՝ 868 ընտանիք
- Տարագրութեան գնացած ընտանիքները ըստ բնակավայրերի՝
- 240 ընտանիք Քէպուսիէ գիւղից
- 2 ընտանիք Եօղունօլու գիւղից
- 80 ընտանիք Հաճի Հապապլի գիւղից
- 10 ընտանիք Պիթիաս գիւղից
- Ընդամենը՝ 332 ընտանիք:

### ՁՕՆ ԲՈԼՈՐԻՆ ՍԻՐԵԼԻ ՅՕՐՍ (ՅՈՎԱՄԷՓ ԱՍԱՏՐԵԱՆԻՆ)

Սիրելի հայր,  
Հաւատացած եղիր որ ընտանիքդ անմար է պահելու չիշատակդ եւ դու ապրելու ես բոլորիս սրտերում: Սիրելի հայր, մի բան հաստատ է որ աշխարհում շատ կան բարի մարդիկ, բայց քչերին է յաջողում իրենց լաւատեսութեամբ, ներքին էներգիայով յոյս ներշնչել մարդկանց, այդ մարդկանցից էիր դու:

Յա՛յր իմ բարի,  
Դու նման էիր գարնանային այն անձրեւին,  
Որ չի թրջում, այլ քրում է յագուրդ տալով խեմք ծարաւին:  
Նման էիր դու արեւակիր այն շողերին,  
Որ չի այրում, այլ ջերմացնում է: Յայրիմ բարի  
Դու այն ձեռքն էիր, որ միշտ ամո՛ւր ինձ բռնել է դժուար պահին,  
Դու այն մեջքն էիր, որին հանգիստ  
Ես յենուել եմ, երբ չի եղել եւ ո՛չ մի սիւն:  
Դու այն երգն էիր, որի քնքուշ մեղեդու տակ  
Անց եմ կացրել օրեր բազում:  
Իսկ այսօր

Մէկն էլ գնաց մեր շէն տնից,  
Սրտիս մի քար ծանրացաւ,  
Ապուպապիս շիրմի կողքին  
Մի շիրիմ էլ բարձրացաւ:  
Մի խնձոր էլ պոկուեց ճիւղից,  
Մի երագ էլ մոխրացաւ,  
Մէկն էլ գնաց մեր շէն տնից,  
Սրտիս մի քար ծանրացաւ:  
Բարի ճանապարհ քեզ, բարի Մարդ: Յաւանաբար  
Կը հանդիպենք այնտեղ ուր բոլորը գնում են, միայն  
Թէ այնպէս, որ զաւակներն ու թոռները  
Ճանապարհեն լիարժէք ապրած պապիկին, բայց ոչ  
Երբեք հակառակը: Ննջիր խաղաղ եւ թող Աստուած  
Լոյս իջեցնի քո Սուրբ շիրիմին:

### ՑԱՒԱԳՈՒԹԻՒՆ

ԿԱՐՊԻՍ ԵԱՂՍՁԵԱՆԻ մահուան տխուր առիթով Կիլիկեան Բարեգործական Միութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն: Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

### ՑԱՒԱԳՈՒԹԻՒՆ

ՇՈՒՇԻԿ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Վարդան եւ Վարդուհի Լերանեան կը յայտնեն իրենց խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն: Առ այդ \$200 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

Office Space for Lease

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

հեռաձայնել՝ (626) 398-0506

**VA Print Media**

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ

**Vahe Atchabahian**

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com



**LIVE**  
 8am - 8pm PST\*  
 \*San Francisco 8am - 7pm PST

**ԴԵՊՐԻ ԱՐՅԱԽ**  
**EN ROUTE ARTSAKH**

Scan Below  
 and Donate  
**\$10!**

CITY-STATE-REGION	STATION	DIGITAL CHANNEL	CABLE CHANNEL	SATELLITE	TIME
Northern California Sacramento	KSAO <b>49</b>	49.1	Comcast Channel 194 AT&T U-verse Channel 4		8am to 8pm PST
San Francisco Bay Area San Francisco, Oakland, San Jose, Berkeley, and others.	KTSF <b>26</b>	26.1	Comcast Channel 8, 21 or 26 Charter Channel 8 or 98 AT&T U-verse Channel 8 Google Fiber Channel 8	DirecTV 26 or 893 DISH 26 or 8237	8am to 7pm PST
Central California Fresno & Mid-State	KGMC <b>43</b>	43.1	Comcast Channel 10 AT&T U-verse Channel 43	DirecTV 43 DISH 43	8am to 8pm PST
Southern California Greater Los Angeles Area	KSCI <b>18</b>	18.1	AT&T U-verse Channel 18 Verizon FiOS Channel 18 Major Cable Systems Channel 18	DirecTV 18 DISH 18	8am to 8pm PST

For all other locations please tune in to our **LIVE WEBCAST** at [www.ArmeniaFund.org](http://www.ArmeniaFund.org)

Text **ARMENIA** to **50555** to give **\$10** to Armenia Fund Inc. Reply with **YES** to confirm your donation.

\$10.00 donation to Armenia Fund Inc. Charges will appear on your wireless bill, or be deducted from your prepaid balance. All purchases must be authorized by account holder. Must be 18 years of age or have parental permission to participate. Message and Data Rates May Apply. Text **STOP** to **50555** to **STOP**. Text **HELP** to **50555** for **HELP**. Full Terms: [mGive.org/T](http://mGive.org/T). Privacy Policy: [mGive.org/P](http://mGive.org/P)

Visit & Donate: [www.armeniafund.org](http://www.armeniafund.org) or Call: 1-800-888-8897

Design: 688 6888 www.arkhiv.com